1997, ԴԵԿՏԵՄԲԵՐ Բ (ԹԻՒ 20)

Քրիստոնեայ Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԹԵՐԹ

ԱՐԵՒԵԼՔԻ մոգերը բացին իրենց միտքի եւ հոգիի աչքերը եւ տեսան երկնային աստղը, քալեցին անոր լոյսին ուղղութեամբը, գտան լոյսին սկզբնաղբիւրը՝ Յիսուսը Բեթղեհէմին մսուրին մէջ եւ մերկանալով իրենց արքայական մեծապատուութեան հանգամանքներէն՝ մեծութիւնն ու քաջութիւնը ունեցան երկրպագելու Անոր:

Մենք որպէս հայ քրիստոնեաներ, Հայաստանեայց Եկեղեցոյ զաւակներ, հրաւիրուած ենք երթալու դէպի Բեթղեհէմի մսուրը: Այդ մսուրը վերստեղծուած է մեր հոգիներուն մէջ այն օրէն ասդին, երբ մեր ազգն ու պետութիւնը 301 թուականին քրիստոնէութիւնն ընդունեց որպէս մեր ազգին անփոխարինելի կրօնը: Մեր Հայաստան աշխարհը, Վաղարշապատ անունով ճանչցուած վայրին մէջ դարձեալ Հայոց Բեթղեհէմը ԷՋՄԻԱԾԻՆ անունով:

ԳՈՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՄԲ. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

1997 թվականի դեկտեմբերի 16-19-ը Մայր Աթոռում գումարվեց Գերագույն հոգեւոր խորհրդի հերթական ընդլայնված նիստը՝ նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի եւ ատենապետությամբ Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ Զավեն արք. Չինչինյանի ու Ամերիկայի Միացյալ Նահանգների Արեւմտյան թեմի առաջնորդ Վաչէ արք. Հովսեփյանի:

Նիստի օրակարգում քննության առնվեցին դպրական եկեղեցիների վերանորոգության, եկեղեցիների կառուցման, Գերագույն հոգեւոր ճեմարանի զարգացման, հոգեւորականների դպրաստության ուժեղացման, քրիստոնեական դաստիարակության տարածման, կրոնի ուսուցիչների կազմավորման դրական եւ բաղձալի երեւոյթները, եւ որոշվեց առավել ուժ տալ նրանց զարգացմանը: Քննարկվեցին նաեւ քրիստոնեության ընդունման 1700 ամյակի կապակցությամբ կատարվող աշխատանքները, նվիրատեսական աթոռների հետ հարաբերությունները, Երեւանի մայր եկեղեցու կառուցման ընթացքը, Հայ Եկեղեցու կանոնադրության հարցը, Մայր Աթոռի տնտեսական-ֆինանսական կացությունը, այլ հարակից հարցեր:

Նիստի առաջին օրը Վեհափառ Հայրապետը ներկայացրեց վերջին տասը ամիսներին Մայր Աթոռի կատարած բազմաբնույթ գործունեության համառարփակ եւ ամփոփ դպակերը: Խոսվեց Մայր Աթոռի միաբանության, Հոգեւոր ճեմարանի, տպարանի գործունեության մասին, տեղեկություններ տրվեցին հովվական-տնտեսական այցելությունների, ինչպես նաեւ Մայր Աթոռ Ս. Էջմիածին կատարված այցերի, միջեկեղեցական հարաբերությունների մասին:

Դեկտեմբերի 17-ին 1700 ամյակի տոնակատարության ֆինանսական մասնակցեց եւ պետական հանձնաժողովի կարծիքներն ու դիտողությունները Խորհրդի անդամներին ներկայացրեց տոնակատարության պետական հանձնաժողովի նախագահ Գագիկ Հարությունյանը: Նա ժողովականներին ներկայացրեց պետական հանձնաժողովի հիմնական ծրագրերը: Դրանց թվում են գիտական հրատարակություններ, գիտական համաժողովների կազմակերպում Հայաստանում եւ արտասահմանում, մշակութային միջոցառումներ: Մասնավորապես եկող տարի երկու խոշոր գիտաժողովներ կկազմակերպվեն Երեւանում եւ Միլանում: Տեղեկացվեց նաեւ, որ պետբյուջեով զգալի գումարներ կտրամադրվեն Երեւանում կառուցվող Սբ. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու շինարարությանը: Վեհափառ Հայրապետը բոլոր ժողովականներին տեղյակ պահեց «Հայաստան» համահայկական հիմնադրամի կատարած մեծ գործի մասին Հայաստանում եւ Արցախում եւ կոչ արեց թեմական առաջնորդներին քաջալեր հանդիսանալ սույն համազգային գործին:

Դեկտեմբերի 18-ին՝ ժամը 15.00-ին, Հանրապետության նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը ընդունեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին եւ Գերագույն հոգեւոր խորհրդի անդամներին՝ նախագահական դպլասում: Հանդիպման ընթացքում նախագահը շեշտեց, որ պետության եւ եկեղեցու փոխհարաբերությունները ընթանում են բնականոն ճանապարհով, մեծապես գնահատեց Մայր Աթոռի հեռգիտե ծավալվող գործունեությունը՝ հատկապես կադրերի դպրաստության գործում եւ միջեկեղեցական ասպարեզում, հավատացրեց, որ 1700 ամյակի տոնակատարության խնդիրը գտնվում է պետության ուշադրության կենտրոնում: Վեհափառ Հայրապետն իր գոհունակությունը հայտնեց նախագահին՝ արտահայտված բարձր գնահատականի համար եւ հույս հայտնեց, որ պետություն-եկեղեցի համագործակցությունը հետգիտեն ավելի կխորանա՝ ի շահ մեր հայրենիքի եւ ժողովրդի:

Դեկտեմբերի 19-ին Գերագույն հոգեւոր խորհրդի հերթական նիստն ավարտեց աշխատանքը:

Գերագույն հոգեւոր խորհրդի նիստին մասնակցում էին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գարեգին արքեպս. Ներսիսյանը, Մայր Աթոռի դիվանապետ Ներսես արքեպս. Պոզաթյանը, Արեւմտյան Եվրոպայի հայրապետական դպսվիրակ եւ Փարիզի առաջնորդ Գյուս արքեպս. Նազաբյանը, Վիրահայոց թեմի առաջնորդ Գեւորգ արքեպս. Սերայդարյանը, Ծայրագույն արեւելքի հայրապետական դպսվիրակ, Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի առաջնորդ Աղան արքեպս. Պալիոզյանը, Արգենտինայի թեմի առաջնորդ Գիսակ արքեպս. Մուրադյանը, Ամերիկայի Միացյալ Նահանգների Արեւելյան թեմի առաջնորդ Խաժակ արքեպս. Պարսամյանը, Արմավիրի թեմի առաջնորդ Ասորիկ եպս. Արիստակիսյանը, Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ եպս. Մարտիրոսյանը, Այնոյայ թեմի առաջնորդ Աբրահամ եպս. Մկրտչյանը, Գերագույն հոգեւոր խորհրդի աշխարհական անդամներ Վլադիմիր Բարխուդարյանը, Գրիգոր Խանջյանը, Պիոն Հակոբյանը եւ Դավթյել Պապայանը: Ժողովի մասնակիցների թվում էին նաեւ Գերագույն հոգեւոր խորհրդի երկու նոր անդամները՝ Ուկրաինայի թեմի առաջնորդ Նարեգ եպս. Հովհաննիսյանը եւ Գեղարքունյաց թեմի առաջնորդ Անանիա եպս. Առաքելյանը, որոնք այսուհետ Գերագույն հոգեւոր խորհրդում կփոխարինեն Շիրակի եւ Գուգարաց թեմերի նախկին առաջնորդներ Գրիգորիս արքեպս. Բունիաթյանին եւ Արսեն արքեպս. Բերբերյանին:

ՍՄՍԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

ՕԵՎԵՑ ԳՈՐԻՍԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻՆ

Դեկտեմբերի 20-ին Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը մեկնեց Այնոյայ թեմ՝ նախագահելու առաջնորդանիստ Գորիս քաղաքի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու օծման արարողությունը:

Դարասկզբին կառուցված, սակայն անավարտ այս եկեղեցին 30-ական թվականներին փակվեց, եւ ահա այժմ Այնոյայ թեմի, Սյունիքի մարզի, Գորիսի քաղաքապետարանի ու նաեւ քաղաքի ողջ բնակչության ջանքերով հիմնովին վերանորոգվել է, օժտվել նորաբեղ, բարձրադիր գմբեթով:

Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանը, Արգենտինայի հայոց թեմի առաջնորդ Տ. Գիսակ արքեպս. Մուրադյանը, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի աստվածաբանության դասախոս Տ. Տաքեւ արքեպս. Սարգսյանը, միաբան վարդապետներ եւ սարկավագներ Մայր Աթոռ Ս. Էջմիածնից:

Գորիսի մուտքի մոտ Վեհափառ Հայրապետին դիմավորեցին Այնոյայ թեմի առաջնորդ Տ. Աբրահամ եպս. Մկրտչյանը, Սյունիքի մարզպետ գնեռալ Սուրեն Աբրահամյանը, քաղաքապետ Սուրեն Խաչատրյանը եւ քաղաքային իշխանությունների այլ ներկայացուցիչներ: Ավանդական աղ ու հացի մատուցումից հետո ավտոշարասյունը առաջնորդվեց դեպի եկեղեցի: Պատարագիչն էր Գարեգին արքեպիսկոպոսը: Օծման արարողության առաջին բաժինը՝ Սուրբ Սեղանի օծումը, կատարեց Վեհափառ Հայրապետը: Առա սրբազան հայրերի կողմից օծվեցին նաեւ եկեղեցու 12 սյուները:

Օծման արարողությունից հետո ժողովրդին իր ողջագալը փոխանցեց Վեհափառ Հայրապետը, որը մասնավորապես ասաց. «Այս եկեղեցու օծումը սոսկ քարերի օծում չէ, սա ժողովրդի՝ օծումն է աստվածային շնորհով: Եկեղեցին կա՝նք է եւ ոչ թե շենք ու հուշարձան: Դո՛ւք եք եկեղեցին: Ձեր մասնակցությա՛մբն է եկեղեցու կանգին, որ իմաստ ունի տա այս եկեղեցու վերակառուցմանն ու օծմանը: Հոգեւոր վերանորոգության շունչն է ահա, որ այստեղ՝ Գորիսում, արտահայտվում է, ինչպես ողջ Հայաստանում, Արցախում եւ այլ տարածքներում: Թող այդ շունչը զորացնի եւ ոգեշնչակերտի ձեր բոլորի կյանքերը»:

Ելույթ ունեցան նաեւ Տ. Աբրահամ եպիսկոպոսը, մարզպետ Ս. Աբրահամյանը, քաղաքապետ Ս. Խաչատրյանը, հատուկ շնորհակալանի խոսք ուղղելով Վեհափառ Հայրապետին, որը հակառակ ծանր ֆիզիկական դրության եղանակին ներկա գտնվեց Այնոյայ մարզի ու թեմի համար խիստ կարեւոր այդ արարողությանը: Նորածո եկեղեցու առաջին այցելուների թվում էին 33 վարչապետ Ռոբերտ Քոչարյանը, Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը:

Նույն օրը եկեղեցում կատարվեցին ոգեկի եւ մկրտության արարողություններ, իսկ նորաստեղծը եւ մկրտյալ երեխաները ստացան նաեւ Վեհափառ Հայրապետի օրհնությունը: Գորիսի Ս. Գրիգոր օծումը դարձավ իսկական ժողովրդական տոնախմբություն:

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ ՀՀ ՆԱԽԱԳԱՀ ԼԵՒՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՄՈՏ

Դեկտեմբերի 18-ին ՀՀ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանն ընդունեց Գերագույն հոգեւոր խորհրդի անդամներին՝ Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Ա-ի գլխավորությամբ:

Ինչպես հայտնեցին ՀՀ նախագահի մամուլի ծառայությունից, Վեհափառ Հայրապետը նախագահին տեղեկացրել է, որ Գերագույն խորհուրդը, որը տարեկան երկու անգամ գումարում է լիագումար նիստեր, այս անգամ ֆինանսավորում է քրիստոնեության 1700 ամյակի տոնակատարությունների, Երեւանի Մայր եկեղեցու շինարարության, նվիրատեսական աթոռների հետ հարաբերությունների, եկեղեցու կանոնադրության մշակման հարցերը:

Լեւոն Տեր-Պետրոսյանը, վստահեցնելով, որ ինքը մշտապես հետաքրքրվում է Հայ Եկեղեցու գործերով բացառիկ չմիջամտելու տրամադրությամբ, ուրախությամբ նշել է եկեղեցու ակտիվացումը, հավատացրել, որ պետությունը որեւէ ձեւով չի սահմանափակում եկեղեցու գործունեությունը:

Անդրադառնալով եկեղեցու խնդիրներին՝ նախագահը կարեւորել է հոգեւոր կադրերի դպրաստումը, աշխատանքը ժողովրդի հետ, միջազգային կապերի զարգացումը, եկեղեցական շինարարությունը, նշել է նաեւ, որ գալիք տարվա պետբյուջեում գումար է նախատեսված Մայր եկեղեցու շինարարության համար:

Լեւոն Տեր-Պետրոսյանը հատկապես կարեւորել է Հայ Եկեղեցու միասնության խնդիրը:

ՍՐՄԵՆՊԵՏԵՍ

ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ

«ՓԱՌՔ ԱՍՏԾՈՒՆ, ՈՐ ՆՈՐԱՆՈՐ ՆՎԱՃՈՒՄՆԵՐ ԱՐՁԱՆԱԳՐԵՑԻՆՔ ԱՆՑՆՈՂ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ»

Արմենոյրեսի թղթակցի զրույցը Նորին Սրբություն Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի հետ

1997 թ. տարեվերջին Արմենոյրեսի թղթակից Վանիկ Սանթրյանին Վեհարանում ընդունեց եւ Մայր Աթոռում այս տարի ծավալված գործունեության շուրջ զրույց ունեցավ Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց կաթողիկոսը:

- Վեհափա՛ռ Տեր, անշուշտ եկեղեցին եկեղեցի է իր ժողովրդով, ուստի եւ խնդրում եմ խոսեք անցած մեկ տարում Մայր Աթոռի եւ հավատացյալ ժողովրդի միջեւ կապերի ամրապնդման մասին:

- Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, Ամենայն Հայոց կաթողիկոսության առաքելության մեջ ժողովրդի հետ առնչությունը մեծ նշանակություն եւ լայն տեղ գրավող բնագավառներից է, որովհետեւ Եկեղեցին ինքը ժողովուրդն է: Եկեղեցին շենքը չէ, եւ անհրաժեշտ է, որ Եկեղեցու հոգեւոր կենտրոնը ժողովրդին մատուցած իր ծառայության մեջ եւ այդ ծառայության արդյունավորման համար նեկա լինի ժողովրդի կյանքի մեջ, հաղորդակից՝ ժողովրդի ադրումներին, զգացումներին, տագնապներին, նեղություններին, հաջողություններին: Մի խոսքով, Եկեղեցին՝ իբրեւ մի հասատություն, չպիտի տարանջատ լինի ժողովրդի կյանքի շրջանակից:

Այս հայեցակետից առաջնորդված՝ մենք անցնող տարեշրջանում ունեցանք լայնատարած գործունեություն ժողովրդի հետ հարաբերության մարզում: Այսպես, եղանք Հայաստանի թեմերում, Ադարատյան թեմից մինչեւ Գեղարքունյաց, Սյունյաց, Արագածոտնի, Շիրակի ու Գուգարաց: Ժողովրդի հետ այդ հաղորդակցությունը, այդ հարաբերությունը մեծ բարիքներ առաջ բերեցին նրա կյանքում, առաջին հերթին այն տեսակետից, որ ժողովուրդն զգաց, թե իր հոգեւոր ոլորտ հեռու նստած մի անձնավորություն չէ, այլ հետաքրքրվում է իր կյանքի բարելավմամբ, հայցնում իր նախանձախնդրությունը, սերը եւ նվիրումը իր բոլոր հոգեւոր օգնականների հետ միասին:

Պիտի ասեմ, որ Հայաստանի մեր այս թեմերի մեջ մենք ունեցանք երեք կարեւոր նեդրումներ նոր եկեղեցիների տեսակետից: Սոդիսակում հիմա բարձրանում է մի նոր եկեղեցի, ավարտվել է արդեն Իջեւանի նոր եկեղեցին, մենք օծեցինք 13-դ դարի մեր ճարտարապետական արվեստի գոհարներից մեկը՝ Արենիի եկեղեցին, որը Մոմիկ վարդապետի ձեռագործն է, ճարտարապետական արվեստի սքանչելի արտահայտություն:

Հետեւաբար, ժողովրդի հետ լինելու ձգտումի մեջ մենք փառ եմ տալիս Աստծուն, որ նորանոր նվաճումներ կատարվեցին անցնող տարվա ընթացքում:

Դուք արդեն գիտեք, որ Երեւանում կառուցվում է Սուրբ Գրիգոր Լուսավորիչ անունով մկրտելիք, կնքվելիք նոր մայր եկեղեցին, որը լինելու է գագաթնակետը Հայաստանում հրատարակության ոլորտական կրոն ընդունման 1700 ամյակի բոլոր նախաձեռնությունների կամ միջոցառումների: Ժողովրդի հետ հարաբերության երկրորդ բնագավառը եղավ մեր հովվական այցելությունը Հարավային Ռուսաստան: Առաջին անգամ էր, որ մենք ճանաչեցինք Հարավային Ռուսաստանի մեր ժողովրդի մի մասին: Մեկ տարուց ավելի է, ինչ այնտեղ մենք նոր թեմ ենք հաստատել, եւ ինձ համար հայտնություն եղավ այդ ժողովրդի հետ հաղորդակցությունս, որովհետեւ նկատեցի, թե նա ինչքան ամուր է կապված հայկական ավանդությանը: Ես չգիտեմ՝ ո՞ր կաթողիկոսին է տրվել այդ մեծ շնորհը Աստծուց եւ ոչ միայն իր ժողովրդից, որ մեկ շաբաթվա ընթացքում երեք նոր եկեղեցի օծի, ինչը կատարեց Կրասնոդարում, Կուրգանսկում եւ Կիսլովոդսկում, եւ տեղեկանա ուրիշ եկեղեցիների կառուցման մասին այս տարածաշրջանում:

Ժողովրդի հետ մեր հարաբերության երրորդ բնագավառը եղավ հեռավոր արտասահմանը: Արտասահմանի մեր ժողովրդի հետ կապը դահեկու տեսակետից շատ անհրաժեշտ է, որ Մայր Աթոռը զգացնի իր ներկայությունը այդ թեմերում: Մենք ունեցանք միաբաններ Մայր Աթոռից, որոնք այդ թեմեր գնալով՝ զգացրին Սուրբ Աթոռի ներկայությունը, բայց հովվական այցելությունը շատ ավելի մեծ նշանակություն, ավելի մեծ իմաստ է ստանում:

Ես ուզում եմ, որ մեր ժողովուրդն իմանա, որ անցյալ հունվարից մինչեւ այսօր մենք կատարել ենք հետեւյալ այցելությունները: Նախ՝ ֆրանսահայ գաղութ. Փարիզ, Լիոն, Նիս, Մարսել: Առա մեկնել ենք Ավստրալիայի թեմ՝ մեր ժողովրդին հանդիպելով Սիդնեյում, Մելբուռնում եւ Կանբերայում: Այնուհետեւ հովվական այցելություն ենք տվել Ավստրիայի թեմ: Նաեւ Մոսկվայում եղանք մեր ժողովրդի հետ, մասնավորապես՝ Կրեմլում կազմակերպված «Հայ Եկեղեցու գանձերը» ցուցահանդեսի բացման առիթով: Այնտեղ մենք դասախոսություն տվեցինք ժողովրդին, եկեղեցում քարոզեցինք՝ ջանալով ավելի ամրացնել, ավելի կենդանի դարձնել կապը Մոսկվայի մեր հայ ժողովրդի հետ:

- Վեհափա՛ռ Տեր, քանի որ Ձեր Սրբությունը միանգամից ոլորտական տվեց նաեւ երկրորդ հարցիս՝ մինչեւ հարցը տալը, այսինքն, սփյուռքի հետ շփումներին, խնդրեմ անցնենք երրորդին, որ վերաբերում է Մայր Աթոռ-այլ եկեղեցիներ հարաբերություններին:

- Սիրով: Այս հարցում եւս տարածուն գործունեություն է ծավալվել: Անցած ամրիլ ամսին Մայր Աթոռում եղավ Ֆրանսիայի բարեկարգյալ եկեղեցիների ոլորտվիրակությունը, մայիսին մենք այցելեցինք վրաց օրթոդոքս եկեղեցու ոլեսին՝ Իլիա Երկրորդ կաթողիկոսին, սա նոր բայլ է հայ-վրացական հարաբերությունների մարզում:

Անցնող տարվա հարաբերություններում ամենանշանակալիցը Կ. Պոլսո Տիեզերական ոլտրիարքի հույն օրթոդոքս եկեղեցու ընդհանուր հոգեւոր ոլեսի այցելությունն էր Հայաստան: Մեր ոլատմության մեջ առաջին անգամն էր, որ Կ. Պոլսո եկեղեցու գլխակալը այցելում է Ս. Էջմիածին: Առա մենք ունեցանք նաեւ Անգլիկան Եկեղեցու Միջին Արեւելքի եկեղեցիների ոլեսի այցելությունը հենց այս ամսվա սկզբին, որը ժամանել էր Երուսաղեմից /այնտեղ նա ունի իր առաջնորդական աթոռը/:

Ամենակարեւորն Ամենայն Հայոց կաթողիկոսության մասնակցությունն էր Եվրոպայի բոլոր եկեղեցիների /կաթոլիկ, օրթոդոքս, բողոքական/ ընդհանուր էքումենական համաժողովին, որն ուրարտարի մեկ է կայանում:

Այս վերջին համաժողովում ներկա գտնվեցին շուրջ 10 հազար անձեր, որոնցից մի բանի հազարը ներկայացուցիչներ էին հարյուրավոր եղիպտոլոգներ, վեց կարդինալ, Քենտրբերիի արեղիպկոպոսը, Ալեքսի Երկրորդ ոլատրիարքը եւ ուրիշներ: Մեր Մայր Աթոռը մասնակցեց վեց մարդուց բաղկացած մի ոլատվիրակությամբ եւ մեզ վիճակվեց ժողովի բացումը կատարել մի կարեւոր դասախոսությամբ՝ ժողովականներին ներկայացնելով օրվա հարցը, թե ինչ է հրատարակությունն այսօր Եվրոպայում եւ ինչպես է դիմակայում այն հարցերին, որոնք ծագում են ներկա ընկերության կյանքում: Այդ տեսակետով մենք տվեցինք «Մենք մեր հանդեպ» դասախոսությունը, որը լայն արձագանք գտավ եւ մամուլում, եւ եկեղեցական շրջանակներում:

Անգլիկան Եկեղեցու հետ մեր վերջին հարաբերությունը եղավ այցելությունը Անգլիա՝ Քենտրբերիի արքեպիսկոպոսի հրավերով, որի հետ մենք բազում շփումներ ունեցանք՝ աղոթքներ եկեղեցիներում, ոլատարագ, քարոզներ, դասախոսություններ, այցելություն Օքսֆորդի համալսարան եւ ի վերջո միասնական հաղորդություն ստորագրեցինք առաջիկայում երկու Եկեղեցիների գործակցությունը ավելի գործնական հունի մեջ դնելու առաջարկությամբ:

Ահավասիկ այն ընդարձակ դաշտը, որը մեր ձգտումների իրականացումն է: Հայոց Եկեղեցին չպիտի կղզիացած մնա, չպիտի ինքն իր մեջ ներփակյալ լինի: Այս դարը եղել է հաղորդակցության դար, դա նշանակում է, որ մենք ոլատրավոր ենք մշակել հարաբերություններ, եւ ուրախ եմ, որ այդ մարզում ունեցանք լայնատարած գործունեություն:

- Վեհափա՛ռ Տեր, խնդրում եմ մի բանի ասել խոսք Մայր Աթոռ-ոլեսության հարաբերությունների մասին:

- Խնդրեմ: Մեր հայրենի ոլեսության հետ մեր հարաբերությունները բնականոն ընթացքի մեջ են այն բոլոր բնագավառներում, որտեղ ոլեսության եւ Եկեղեցու համագործակցության կարիք է եղել եւ օգտակար մեր ժողովրդի համար: Այս մարզում ոլիսի հիշեմ, որ մենք բանիցս առանձնական հանդիպումներ ենք ունեցել Հայաստանի Հանրապետության նախագահի, Ազգային ժողովի նախագահի, վարչապետի, նախարարների հետ: Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու ոլաշտոնական հիմնադրության 1700-ամյակի տոնակատարությունների շրջագծում գլխավորապես համագործակցել ենք ՀՀ նախագահի կողմից նշանակված ոլեսական հանձնախմբի նախագահ, Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանի հետ: Բազում հանդիպումներ ենք ունեցել, ծրագրումներ կատարել ներդաշնակ ձեւով եւ գործակցաբար այդ տոնակատարությունը առաջ տանելու համար: Մենք լայն գործակցություն ենք ունեցել հանրապետության մշակույթի նախարարության հետ, որի արդյունքներից մեկն եղավ հատկապես Մոսկվայի Կրեմլում կազմակերպված հիշատակածս ցուցահանդեսը, որը մեծ ներդրում եղավ հայ-ռուսական հարաբերություններում, հայ ժողովրդի մշակույթի արժեքներ եւ, առհասարակ, հայ ժողովուրդը ներկայացնելու մարզում:

Այժմ էլ ծրագրումներ ունենք առաջիկայում առավել եւս սերտացնելու այդ գործակցությունը, որպեսզի ոլեսությունը եւ Եկեղեցին միասնաբար եւ առավել ներդաշնակ, գործուն աշխուժությամբ կազմակերպեն բոլոր այն ձեռնարկումները, որոնք մեր ժողովրդի եւ ընդհանուր աշխարհի գիտակցության մեջ կենդանացնելու են այն իրողությունը, որ հայ ժողովուրդը առաջինն էր, որ ոլեսությունը, արեւն ոլաշտոնապես, ոլեսականորեն ճանաչեցին քրիստոնեությունը որպես ազգային ոլեսական կրոն: Սա մեծ դեղի է մարդկային ոլատմության ընթացքում:

Գործակցությանն ուրիշ բնագավառ է եղել մեր զորակցությունը եւ մասնակցությունը «Հայաստան» համահայկական հիմնադրամի աշխատանքներին: Մենք մեծապես կարեւորում ենք այս հայրենաշեն գործունեությունը:

- Վեհափա՛ռ Տեր, մեզ բոլորիս հուզող հարցերի հարցը, անշուշտ, Լեռնային Ղարաբաղի խնդիրն է: Կուզենայինք լսել Ձեր Սրբության խոսքը:

- Ղարաբաղի հարցում մենք միշտ եղանք զորավիգ Ղարաբաղի մեր ժողովրդի ազատ կամքի համաձայն ադրելու իրավունքին եւ այդ մարզում մենք ամեն տեսակ օժանդակություն արեցինք Արցախի մեր թեմին, որպեսզի նա կատարի իր ոլարականությունը այս դժվարին օրերին: Մենք միշտ հայտարարել ենք եւ գործնապես արտահայտել մեր զորակցությունը Ղարաբաղի ժողովրդի իրավունքների ոլաշտպանությանը: Բայց բնականորեն իբրեւ Եկեղեցի մենք չենք մտել բանակցությանց այն գործնական փուլի մեջ, որ ոլեսության գործն է՝ հառաջ տանելու իր համաբաստախոս մարմիններով: Մենք դիտում ենք, որ հարցը ոլիսի լուծվի ժողովրդի գեղագույն տիեզերն ի նկատի ունենալով Արցախում եւ Հայաստանում:

- Վեհափա՛ռ Տեր, Մայր Աթոռի մեռնակայրում շինարարական հրաոարակներ են առաջացել: Կարծում եմ, որ եկեղեցաշինության մարզում միայն դրանք չեն, այլ վայրերում էլ աշխատանքներ են ընթանում: Մի բանի խոսք այդ մասին:

- Շինարարական մարզում, փառք Աստծո, բազում աշխատանքներ ենք կատարել: Օտական գյուղում՝ Սուրբ Մեսրոպ Մաշտոցի շիրիմի կողքին, մի փլատակ շենք եր վերանորոգել, կոչել «Սուրբ Մեսրոպ Մաշտոց դպրության տուն»: Հիմնովին, արմատապես այդ տունը դարձել է մշակույթի մի կենտրոն՝ իր տնտեսով, գործունեությամբ: Այնտեղ կայանալու են գիտաժողովներ, հավաքներ, արվեստի գործերի ցուցադրություն, գործում է գրադարան: Այս հավաքներ նվիրվելու են Ս. Մեսրոպ Մաշտոցի եւ Ոսկեդարյան բարգմանչաց սերնդի մեր մշակութային ժառանգությանը: Այնտեղ կառուցել ենք նաեւ նոր առաջնորդարան: Երկու շենքերն էլ փոխվել են հատուկ բարեարարություններով. առաջին բարեարան էր Ջիվան Գոտիյանը Չիկագոյից, երկրորդը՝ տեր եւ տիկին Ժիրայր եւ Հասմիկ Գաբրիելյանները Լիբանանից, իսկ առաջին շենքում բանգարանային բաժնի ծախսերը հոգացել է «Գալուստ Կյուլբենկյան» հիմնարկությունը:

Մեզ համար մեծ իրադարձություն էր Գեւորգյան ոլատմական ճեմարանի շենքի վերակառուցումը, որի բարեարարները եղան տեր եւ տիկին Հովնանյանները, եւ բոլորովին կերարանափոխվեցավ շենքը: Նրա բացումը սեպտեմբերի 18-ին կատարվեց մեր հանրապետության նախագահի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահի, Հայաստանի վարչապետի, Սահմանադրական դատարանի նախագահի, նախարարների, մսավորականների, հյուրերի, մեր հոգեւորականների ներկայությամբ:

Մենք կառուցումներ ենք ունեցել Նորավանքում, Կարբիում եւ Բյուրականում: Այստեղ հիմնովին վերանորոգվում են եկեղեցիները բարեարարների աջակցությամբ: Շուտով կօծենք Գորիսի եկեղեցին, կառուցման ընթացքի մեջ է Կաղանի եկեղեցին:

Հիմնովին կերարանափոխելու ենք Մայր Աթոռի շրջաղացը: Նոր ցանկապատում ենք կատարել: Գեւորգյան ճեմարանի կողքին կառուցվում է հանրակացարան՝ 120 աշակերտի համար, որի բարեարարները տեր եւ տիկին Շամլյաններն են Ֆրեզնոյից: Ուսանողների արդեւու ներկա պայմանները շատ անցանկալի վիճակում են, հանրակացարանը կբարելավի այդ:

«Հայաստանի Հանրապետություն», 18 դեկտեմբեր, 1997թ.

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՃԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Սույն թվականի դեկտեմբերի 13-ին եւ 14-ին՝ շաբաթ եւ կիրակի օրերին, հոգեւոր մխիթարության եւ ուրախության օրեր եղան Մայր Աթոռում. Ս. Էջմիածնի հոգեւոր ճեմարանի 1995 եւ 1996 թվականների երեք շրջանավարտներ Սամվել արկ. Խաչատրյանը, Նշան արկ. Հովհաննիսյանը եւ Տիգրան արկ. Սանոսյանը, որոնք հաջողությամբ ղաւոտղանել էին ավարտաճառերը՝ առաջադրելով ինքնուրույն գիտական աշխատանք կատարելու իրենց կարողությունը, քահանայական ձեռնադրություն եւ օծում ստացան Մայր տաճարում մատուցվող Սուրբ եւ Անմահ Պատարագի ժամանակ՝ ձեռամբ եպիսկոպոսի հայոց թեմի առաջնորդ գերաւնորհ Տ. Զավեն արքեպիսկոպոս Չինչինյանի եւ խատավիլակությամբ հոգեշնորհ Տ. Հայկազուն ծ. վրդ. Նաջարյանի:

Ըստ Հայ Առաքելական Ս. Եկեղեցու «Ճեռնադրութեան Մաշտոցի»՝ շաբաթ օրը՝ հավատ ժամերգության /տեղի է ունենում քահանայական կոչման կարգը/, ուրվագիրը, իրենց խոնարհությունը դրսեւորելով, «Նայեա եւ լուր» շարականի ուղեկցությամբ, երեք հանգրվաններով՝ ծնրադիր մոտենում են Իջման Սուրբ Սեղանին, որտեղ եւ արքեպիսկոպոսը կատարում է հավատաբանման արարողությունը: Խատավիլակը ներկայացնում է ընծայացուներին պատասխանելով ձեռնադրող արքեպիսկոպոսի հարցերին: Սարկավագներն ուխտում են հետեւել Տիրոջ պատգամներին եւ հնազանդվել Հայաստանյայց Եկեղեցու կանոններին. «Յանձն առնումք կատարել զամենայն հրամանս ձեր, ըստ կանոնի արդյն գնալ եւ ոչ լուծանել կամ հակառակ առաջնոյն կալ»:

Հակառակ խորհրդավոր է Սուրբ եւ Անմահ Պատարագը, որի ժամանակ տեղի է ունենում ընծայուցների՝ ափսառիից հրաժարման արարողությունը եւ քահանայական ձեռնադրությունը: Նորընծաները խատավիլակի առաջնորդությամբ ծնրադիր բարձրանում են Ս. Խորան եւ դառնում դեղի հավատացյալ ժողովուրդը՝ «Աստուածային եւ երկնային» շարականի երգեցողության ներքո ձեռքերը վեր բարձրացնելով՝ ի նշան հրաժարվելու աշխարհիկ կյանքից եւ ի նվիրումն հոգեւոր կյանքին:

Այնուհետեւ ձեռնադրող արքեպիսկոպոսը «Ճեռնադրութեան Մաշտոցից» ընթերցում է համապատասխան հատվածները՝ Հոր, Որդու եւ Սուրբ Հոգու անունից սարկավագությունից կոչում նրանց քահանայության: Ընծայացուները շրջվելով՝ ծնրադիր մոտենում են ձեռնադրող արքեպիսկոպոսին, որը ձեռքերը խաչաձեւ դնելով նրանցից յուրաքանչյուրի գլխին ասում է. «Եւ դնեմ զձեռս ի վերայ սոցա, եւ դուք ամենեքեան աղօթս արարէք, զի արժանի լիցի սա զաստիճան քահանայութեան անարատ պահել առաջի սեղանոյ Տեառն Աստուծոյ»: Այս ամենից հետո սարկավագական ուրարը վերածվում է քահանայական փորուրարի եւ տալիս նրանց հաղորդություն:

Ըստ «Ճեռնադրութեան Մաշտոցի»՝ նորընծաներին տրվում է քահանայական փիլոն եւ պատարագի զգեստ: Զգեստավորվելուց հետո ձեռնադրող արքեպիսկոպոսը արքայություն մեռոնով օծում է նորընծաների ճակատները՝ վերանվանելով Սամվելին՝ Արշակ, Նշանին՝ Խորեն, Տիգրանին՝ Արեն: Այդ արքեպիսկոպոսի հոր թույլտվությամբ նորածած քահանաները տալիս են ժողովրդին իրենց առաջին օրհնությունն ու աստվածային խաղաղությունը:

Արքեպիսկոպոսի կատարման առթիվ արքեպիսկոպոսը բովանդակալից քարոզ խոսեց մանավորապես դիմելով նորածած քահանաներին. «Մեր աթեղաները պետք է գիտեն, թե հայ հոգեւորականին կյանքին մեջ միայն դժվարություններ չկան, այլ կան նաեւ մխիթարության եւ սփոփանքի հիանալի պահեր: Երբ իրենց ներշնչումը կանեն, անդայման հնազանդության, արքայության ողջախոհության եւ պարտականության կատարման սփոփանքը կունենան»:

Պատարագի ավարտից անմիջապես հետո նորածած քահանաները ուղեւորվեցին Վեհարան Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետից ստանալու նրա հայրական օրհնությունն ու բարեմաղթանքը: Վեհափառ Հայրապետը, իր խոսքն ուղղելով նորընծա քահանաներին, ասաց.

«Ձեր ինքնանվիրումը Աստուծո սեղանին, մեր ժողովրդի սպասարկությանը եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնին ինքնին մեծ խոսք է, ձեր հավատքի մարմնացումին արտահայտությունն է, ասրեք:

Այս ընդունարանին մեջ, այս ափսասանելիային մեջ ամենայն տեսակի դժվար պահերու մեջեն կանցնինք երբեմն, մեծ այցելուներ կընդունինք, պատասխանատու անձեր կուգան, կարեւոր հարցերի տուրջ կխոսակցինք, երբեմն վարչական, սողունին գործերու տախտակի մեջ կըլլանք: Ամեն մեկ պահը այս գրասենյակին ունի տեսակ մը եռանդը, լավ, ուրախացուցիչ, երբեմն տրտմեցուցիչ, երբեմն նեղացուցիչ, մարդկային կյանքն այս երկու թելերով է հյուսված: Մա եզակի պահերից մեկն է, որ այս գրասենյակս ավելի լուսալից կդարձնի ձեր երիտասարդ ինքնաբնծայումին դեմ, եւ այս պահը այլեւս չի նմանիլ այն պահին, երբ դուք կուգայիք այստեղ զանազան գործերու, այլեւս ձեզմով հարստացած կգա ինքզինքս, եւ գիտցեք սակայն, որ համեստ ըլլալ, խոնարհ ըլլալը, ընդհանաք ըլլալը հրիստոնեական մեր հավատքի, մեր ամենաբարձր հասկանիչներից մեկն է՝ «Որ խոնարհեցուցանէ զանձն իւր, բարձրասցի, եւ ով բարձրացուցանէ զանձն իւր, խոնարհեսցի»:

Այս է հոգեւորականության ամենակարեւոր հատկանիշներից մեկը: Կմտքեմ, որ այդ միաբանի կարգադրի եւ խոնարհ, հնազանդության ոգին ունեցող հոգեւորականներ ըլլաք: Իմ կյանքի ադրած ճշմարտություններից մեկն այն է, որ եկեղեցիներ ուժեղ կըլլան աշխարհիս մեջ, որոնք այսպես նվիրադեսական կարգի նվիրականությունը գիտեն, հարգել եւ անհատեն ավելի ընդհանրական շահը գերադասել: Ադրեք, Աստված թող ձեզ օրհնե»:

Նույն օրը երեկոյան ժամերգությունից անմիջապես հետո, տեղի ունեցան «Օրհնութիւն աթեղայի» եւ «Օրհնութիւն վեղարի» կարգերը, եւ նորընծա երեք քահանաները ստացան կուսակրոն քահանայության խորհրդանիշը՝ վեղար:

«Քրիստոնեայ Հայաստան» թերթի խմբագրությունը եւս շնորհավորում է նորընծա աթեղաներին՝ հույս հայտնելով, որ նրանք իրենց եկեղեցանվեր առագա գործունեությամբ միշտ բարձր կդասեն հայ հոգեւորականի սուրբ ու նվիրական կոչումը՝ լինելով որպես «ծառա բարի» եւ «հովիվ քաջ», սպասավորելով Ս. Եկեղեցուն եւ ժողովրդին:

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՃԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ Ս. ԳԱՅԱՆԵ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Յրաւաունչ ծնոան այս օրերին հոգեւոր լույսի ջերմությամբ էր ողողված Ս. Գայանե եկեղեցին: Դեկտեմբերի 21-ին Վեհափառ Հայրապետի բարձր կարգադրությամբ կատարվեց Լեւոն արկ. Գրլըճյանի քահանայական ձեռնադրությունը՝ ձեռամբ Ուկրաինայի թեմի առաջնորդ Տ. Նաթան եպիսկոպոս Հովհաննիսյանի:

Դեկտեմբերի 20-ին Մայր տաճարում կատարվեց նորընծայի «Յերեկոյէ կոչումն քահանայութեան» կարգը՝ ըստ «Ճեռնադրութեան Մաշտոցի»՝ խատավիլակությամբ Բագրատ աբեղա Գալստյանի:

Դեկտեմբերի 21-ին Սուրբ եւ անմահ պատարագի ժամանակ «Զի ողորմած եւ մարդասէր ես, Աստուած» աղոթքից հետո սարկավագը խատավիլակի առաջնորդությամբ Սուրբ Սեղանի ծախակողմյան ասպիճանները ծնրադիր բարձրանում է Սուրբ Խորան եւ դառնալով դեղի ժողովուրդը՝ ձեռամբարձ հրաժարվում է աշխարհից՝ կոչվելու համար «...ի սարկաւագութենէ ի քահանայութիւն՝ ըստ վկայութեան անձանց իւրանց եւ ամենայն ժողովրդեան»: Այնուհետեւ «Աստվածային եւ երկնային շնորհ» շարականից հետո նորընծան շրջվում է դեմքով դեղի ձեռնադրող արքեպիսկոպոսը, իսկ արքեպիսկոպոսը իր ձեռքը դնելով նրա գլխին, արտասանում է. «Եւ դնեմ զձեռս ի վերայ սորայ, եւ դուք ամենեքեան աղօթս արարէք, զի արժանի լիցի սա զաստիճան քահանայութեան անարատ պահել առաջի սեղանոյ Տեառն Աստուծոյ» աղոթքը: Նորընծային շնորհվում է փիլոն, սաղավարտ, փորուրար եւ շուրջառ: «Խորհուրդ խորին» երգեցողության հետ միասին փակվում է վարագույրը, ընթացքում էլ զգեստավորվում է նորընծան:

Սուրբ պատարագը շարունակվում է մինչեւ «Ողջոյն տուք միմեանց» պահը: Ճեռնադրող արքեպիսկոպոսը Ս. Մյուռոնով օծում է նորընծայի ճակատն ու ձեռքերը եւ վերանվանում նրան Տ. Արքար քահանա:

Նորընծա Տ. Արքար քահանա Գրլըճյանը տալիս է իր առաջին օրհնությունը՝ «Խաղաղութիւն ամենեցուն»: Հավատ պատարագի հոգեւորականաց, սարկավագաց ու դպրաց դասը, ինչպես նաեւ նեկա հավատացյալ ժողովուրդը շնորհավորում են նորընծա քահանային՝ սրտագին բարեմաղթանքներով:

Արարատ արկ. ԳԱՓՈՅԱՆ

ԲԱՂԴԱԴԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱՌՈՒՑՄԱՆ 40-ԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԸ

Սիլվա Սուքիասյանի հարցազրույցը ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՂՈՍՊԱԼՅԱՆԻ հետ

Իրաքը Մեծավոր աթեւելքի այն երկրներից է, որտեղ հանգրվանեցին Եդեմնից մազապուրծ բազմաթիվ հայորդիներ, եւ կազմակերպվեց Հայոց Առաքելական Եկեղեցու թեմերից մեկը: 40 տարի առաջ կառուցվեց Բաղդադի եկեղեցին, որի հոբելյանը նշելու համար Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դիվանապետ Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը մեկնել էր Իրաք: Վերադարձից հետո դիմեցինք արքեպիսկոպոսին՝ խնդրելով պատմել այցի մասին:

- Իրաքում ստեղծված պատերազմական, քաղաքական, տնտեսական շրջափակման ու տագնապալի պայմանների հետեւանքով հոգեւորականների այցելությունները Իրաքի հայոց թեմ նվազել է: Եւ ահա Բաղդադի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու կառուցման 40 ամյակի տոնակատարության բարեբաստիկ առիթով Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Առաջինի օրհնությամբ եւ Իրաքի թեմի առաջնորդ գերաւնորհ Ավագ արքեպիսկոպոս Սասարյանի հրավերով այցելեցի մեր հայրենակիցների հետ տոնախմբելու այդ գեղեցիկ միջոցառումը: Շնայած այդ օրերին երկիրը լարված ու անհանգիստ էր, Աստված մեր աղոթքները լսեց, բնամու ոչ մի արկ չպայթեց, եւ իրավահայությունը կարողացավ տոնել իր համար թանկ եւ սուրբ տոներից մեկը:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնից, Հայաստանից եւ Արցախից ես ինձ հետ տարել էի Ամենայն Հայոց Հայրապետի օրհնությունը, Լուսավորչի կանթեղի լույսը, մեր ժողովրդի բարի կամքը, սերը եւ մաղթանքները: Բացի Բաղդադից, այցելեցի նաեւ Գերմուկ եւ Մոսուլ քաղաքները, որտեղ հայկական եկեղեցիներ կան: Դժբախտաբար, պատերազմական լարվածության պատճառով հնարավորություն չունեցա այցելել Զախո, որը թուրքական ազդեցության տակ է եւ Բասրա, որը գինվորական շրջափակման մեջ էր: Շնայած երկիրը գտնվում է Տիգրիս եւ Եփրատ գետերի միջեւ, հարուստ է բնական պաշարներով՝ գազ, նավթ, սակայն ՄԱԿ-ի, ԱՄՆ-ի եւ այլ երկրների պարտադրած տնտեսական սահմանափակումները թույլ չեն տալիս, որպեսզի պետությունը տեր կանգնի եւ օգնագործի իր հարստությունները՝ ի նպաստ ժողովրդի զարգացման եւ կենցաղի բարելավման: Բնակչությունը մի տեսակ մատնված է անգործության, անապահովությունը պատճառ է դառնում, որպեսզի հայությունը լքի իր ծննդավայրը եւ հեռանա ավելի ապահով ափեր:

- Իրաքի կառավարության կողմից ճնշում կա՞ հայության նկատմամբ:

- Իրաքում ապրում են շուրջ 250000 քրիստոնյաներ՝ ուղղափառ, կաթոլիկ, արաբ եւ հայ: Փոխհարաբերությունները պետության եւ փոխարամասնություն կազմող հավատացյալների միջեւ բնականոն, նույնիսկ սիրալիր է: Իմ այցելության չորրորդ օրն ինձ ընդունեց տեղի կալվածոց եւ կրոնի նախարարը: Զրույցի ընթացքում հստակ ներկայացվեց նրանց դիրքորոշումը: Նրանք մտահոգ են, որ քրիստոնյաները հեռանում են երկրից եւ ապահովություն են փնտրում Արեւմուտքում: Իմ տպավորությամբ՝ Իրաքի պետական այրերը նույնպես գիտակցում են, որ քրիստոնեությունը Արեւելքի կրոն է, ինքզինքս Արեւելքում ծնվեց, որը արեւելյան կրոնների կատարելությունն է: Քրիստոնեությունը, արեւելյան մյուս կրոնների՝ հրեական, մոզիսական, մուսուլմանական, պետք է ապրի եւ գոյատեւի Արեւելքի մեջ: Ավելին՝ պատճառական, պետական եւ ընկերական հանդիպումներում առաջ էի քաշում Հայաստան-Իրաք բարեկամական կապերի հաստատման գաղափարը՝ ի շահ մեր երկու ժողովուրդների: Իմ հայրենակիցներին հորդորում էի, որ չհուսահատվեն, զգան իրենց լիարժեք քաղաքացիներ, ստեղծեն բոլոր հնարավորությունները՝ զորացնելու երկու երկրների հարաբերությունները, որի համար նպաստավոր հող կա: Քաղաքական այս լարվածության շրջանում իրաքահայության հայացքը ուղղված է դեպի հայրենիք: Ակնկալում են հոգեւոր, մշակութային նոր մերձեցումներ, որպեսզի իրենց գոյամարտում հաղթանակով դուրս գան: Իրաքում շատ լավ կազմակերպված մշակութային կյանք կա: Գործում են մանուկների, երիտասարդների, եկեղեցական համույթներ, ՀՕԿ, բարեգործական կազմակերպություններ:

- Ձեր հանդիպումներում առիթ ունեցա՞ք զարաբաղյան հարցին անդրադառնալու:

- Բոլոր հանդիպումները, իմ քարոզները, զրույցները սկսվում էին Հայաստանով, ավարտվում Ղարաբաղով: Ինչպես Իրաքը, այնպես էլ Հայաստանը շրջափակման մեջ է: Ճակատագրերի միանմանությունը կարող է երկու ժողովուրդների մերձեցման հիմք ծառայել: Բարենպաստ հող կա հայոց եւ իրաքյան պետությունների համագործակցության համար, որին նպաստում է ոչ միայն Իրաքի ու Հայաստանի տնտեսական ու քաղաքական համանման իրավիճակը, այլեւ հայ գաղութի առկայությունը այդ երկրում: Ես, հայկական շրջանակներում ներկայացնելով դարաբաղյան խնդիրը, այն միտքն էի արծարծում, որ Արցախը արյունով ազատագրվեց, եւ ոչ ոք իրավունք չունի ժողովրդի կամքին հակառակ՝ այն հանձնել Ադրբեջանին: Իսկ այն հարցին, թե 150000 բնակչությունը ինչպե՞ս կարող է դիմակայել Ադրբեջանի ճնշմանը, պատասխանեցի. «Հայաստանը Ղարաբաղի համար է, Ղարաբաղը՝ Հայաստանի: Հայ ժողովուրդը արցախահայությանը չի թողնի մենակ»:

Դեկտեմբերի 24

ՏՕՆ ՍՐԲՈՅՆ ՍՏԵՓԱՆՈՍԻ ՆԱԽԱՎԿԱՅԻՆ ԵՒ ԱՌԱՋԻՆ ՄԱՐՏԻՐՈՍԻՆ

ՔՐԻՍՏՈՍԻ ԽԱՉԻ ԴՐՈՇԱԿԻՐԸ

Վենետիկի Սուրբ Գեւորգ կղզու մայր տաճարում այսօր ամփոփված են առաջին անձնդիր մարտիրոսի՝ Սուրբ Ստեփանոսի նշխարները: Եւ ամեն տարի հաւուկ տոնախմբութեամբ այդ սրբատեղին են այցելում Քրիստոսի խաղաղարար լոյսն իրենց հոգիներում կրող բազում հաւատաւոր մարդիկ՝ մեծարանքի արժանի տուրը մատուցելու Աստծու Որդու առաջին վկային՝ Սուրբ Ստեփանոս նախասարկաւագին:

Սուրբ Ստեփանոսն առաքելների կողմից ընտրված յոթ սարկաւագներից էր, որ տոգորված էր աստուածային սիրով եւ օժտված բազում շնորհներով: Որպես նախասարկաւագ՝ նա Քրիստոսի ծառայի ու նվիրյալ աշակերտն էր եւ Նրա ծառայության նախավկան: Այս նահատակի կյանքի մասին աստուածաբանի հմուտ գրչով պատմում է Սուրբ Ղուկաս իր Գործք Առաքելոցում, ինչպես նաեւ Հայսմավուրքը: Իսկ Եկեղեցու հայրերից Ս. Եփրեմը, Ս. Պոկղը, Ս. Գրիգոր Նյուսացին, Ս. Օգոստինոսը եւ այլք ներբողներ են հյուսել նրա փառաբանական կյանքի մասին:

Այս գրավոր աղբյուրներից իմանում ենք, որ Պետրոսի՝ հաւատքի վեմի կողմից սարկաւագ ձեռնադրված Ստեփանոսը՝ Սուրբ Հոգով լցված, համարձակորեն քարոզում էր Աստծու խոսքը, անտեսանելի հրաշքներ էր գործում եւ նախատում օրենքին ու մարգարեներին հակադրվողներին: Այս լուսավոր գործերը նախանձով ու չարությամբ ընդունվեցին խավար հոգիների կողմից, եւ նրանք սուտ վկայություններով ձերբակալել տվին սրբին, առա քարկոծելով սպանեցին: Առաջին վկան հոգին ավանդելուց առաջ ներողամտորեն հրաստուաւսեր հոգով աղոթում էր իր այրումը ոթողների համար: Եւ այդ աղոթքներն էին, որ Ս. Ստեփանոսի սպանությանը մեղսակից Սողոսին մարգարոտեցին եւ ի վերուստ կանչեցին առաքելության՝ փոխակերտելով Պողոսի:

Բոլոր հրաստնյա եկեղեցիները այսօր մեծաշուք հանդիսությամբ տոնախմբում են այդ վկայության հիշատակը: Մենք էլ՝ որպես Քրիստոսի հոտի մի մասնիկ, մտովի գնանք Ս. Գեւորգ եւ խոնարհվենք այն մարդու նշխարների առջեւ, որը դարձառագ լույսի վկայման առաջին մարտիրոսը եղավ: Միաժամանակ հիշենք ու հարգենք նաեւ նրա հետ նահատակված ընկերոջը՝ Նիկանորին, եւ այլ հավատացյալների:

Հայկանուշ ՄԵՍՐՈՊՅԱՆ

ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԽԱՎԿԱՅԻ ՏՈՆԻ ՕՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՒ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ ՀԱՅ ՀԱՎԱՏԱՑՅԱԼ ԸՆԹԵՐՑՈՂԻ ՍԵՂԱՆԻՆ ԴՐԵՑ ՍՈՒՐԲԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻ ՆՈՐ ԳԻՐՔ՝ ՀԵՂԻՆԱԿՈՒԹՅԱՄԲ ՋԱՐԵՏ ԱԲԵՂԱ ԿԱԲԱՂՅԱՆԻ:

Ս. ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՑԻ

ՔԱՐՈԶ ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՆԴՅԱՆ ՄԱՍԻՆ

Հատված

Մեր Քրիստոս Աստծո Ծննդյան եւ Հայտնության տոնը բոլոր տոների սկիզբն ու հիմքն է՝ չորս պատճառով: Նախ՝ որովհետեւ ինչպես որ ի սկզբանե Հայրը, Որդու եւ Սուրբ Հոգու հետ խորհուրդ անելով, ստեղծեց մարդուն Իր պատկերով /Եւ նմանությամբ/, նույնպես եւ այստեղ Հայրը Որդու եւ Սուրբ Հոգու հետ ազգերից ու հավիտյաններից ծածկված խորհուրդն այժմ հայտնեց Իր Բանի մարդեղության միջոցով: Քանզի Հայրը կամեցավ եւ առաքեց Որդուն, եւ Սուրբ Հոգին մարգարդրեց սուրբ Կույսին եւ մարմնացրեց Որդուն: Միածին Որդին մարդացավ եւ ծնվեց Կույսից նոր արարչագործության եւ մարդկային ցեղի փրկության համար: Սա էր ծածուկ խորհուրդը, որ հայտնի դարձավ այսօր. այս պատճառով այսօր բոլոր տերունական տոների սկիզբն է:

Երկրորդ՝ այն, ինչ Օրենքն ու Մարգարեները ժամանակ առաջ կանխաձառեցին, թե Աստված պիտի երեւա մարմնով եւ շրջի մարդկանց մեջ, այսօր իրականացավ. այս պատճառով այսօր բոլոր տոների սկիզբն ու հիմքն է:

Երրորդ՝ Ադամի եւ Եվայի հանցանքից հետո, որի համար նրանք դատապարտվեցին: Ինչպես ասաց Աստված. «/Երկիրը/ փուշ ու տատասկ կբուսցնի քեզ» /Ծն., Գ, 17/ եւ «տրտմութեամբ որդի կծնես» /Ծն. Գ, 16/, որպէս մարդկային ցեղը պատուհասվեց անեծքի տակ ընկնելով: /Արդ/, այսօր այդ անեծքը վերցվեց. դատապարտությունը վերացավ, եւ տրտմությամբ ծնունդը ուրախության փոխվեց, ինչպես հրեշտակն է ասում սուրբ Կույսին. «Ուրախացի՛ր, բերկրեա՛ղ, Տէրը քեզ հետ է» /Ղուկ., Ա, 28/, եւ «կծնես որդի» /Ղուկ., Ա, 31/: Այս պատճառով այսօր բոլոր տոների եւ մարդկանց փրկության գլուխն ու սկիզբն է:

Չորրորդ՝ Ծննդյան տոնը, ըստ կարգի, Խաչելության, Հարության, Համբարձման եւ մյուս տոներից առաջ է: Քանզի մեր Տեր Հիսուս Քրիստոս նախ մարմնով ծնվեց Կույսից եւ աղա եկավ Տաճար, այնուհետեւ երեսուն տարի հետո ծննդյան նույն օրը մկրտվեց, աղա խաչվեց, թաղվեց ու հարություն առավ եւ հետո համբարձվեց երկինք:

Այսպես պատճառներով Ծննդյան տոնը Ս. Եկեղեցում ողջ տարվա ընթացքում կատարվող բոլոր տոների հիմքը, գլուխն ու սկիզբն է:

Հունվարի 5-ի գիշերվանից սկսում ենք նավակատիքը եւ կատարում մեր Քրիստոս Աստծո Ծննդյան նախատոնակը: Արդ, այսօր ոչ թե Ավետումն ենք տոնում, ինչպես ասում են հերձվածողները /Քանզի Ավետման տոնը ինն ամիս առաջ է տոնվել՝ մարտի 7-ին/, այլ հիշատակում ենք այն հետեւյալ չորս պատճառները:

Նախ՝ որովհետեւ Քրիստոսի Ծննդյան նախատոնակն ենք կատարում, ինչպես ավագ շաբաթ օրը Քրիստոսի Հարության /նախօրեին/:

Երկրորդ՝ քանզի Ադամը մարգարեացավ Քրիստոսի Գալստյան մասին՝ կնոջը կոչելով ամենայն կենդանեաց Մայր /Ծն., Գ, 20/, որը կանանց մեջ ամենօրհնյալ սուրբ Կույս Մարիամ Աստվածածինն է. նմանապես եւ մարգարեները, որոնք մարգարեանալով՝ Քրիստոսի Գալստից առաջ սուրբ Կույսին էին տեսնում, ինչպես որ Գեդեոնը իմանալի գեղմն ու գոր տեսավ /Դատ., Զ, 36-40/: Արդ, այսօր նշում ենք եւ երգում, թե եկավ Տերը եւ իրականացրեց նրանց խոսքը՝ հայտնելով /այն/ խորհուրդը, որ ծածկված էր հավիտյաններից:

Երրորդ՝ քանզի հրեշտակի ավետիսը, որ ողջույնով տրվեց Կույսին, այսօր իրականացավ, ինչի համար էլ հայտնվեց /Աստված/ /Եւ/ ի լուր ամենի՝ հրեշտակի ավետման երգն ենք երգում՝ ասելով. «Ուրախացի՛ր, Սրբուհի՛»: Այն, ինչ այնժամ ծածկաբար հայտնվեց սուրբ Կույսին, մարգարեության համաձայն կատարելուց հետո հայտնապես երգում ենք նոր ուրախությամբ:

Չորրորդ՝ քանզի երեք տոներն էլ միեւնույն խորհուրդն ունեն: Ավետման հետ Բանն Աստված իջավ Կույսի արգանդը եւ մարդացավ: Եւ Աստծո Բանի իջնելն ու որպես մարդ գոյավորվելը հրեշտակը ծնունդ է կոչում՝ Հովսեփին ասելով. «Նրանում ծնվածը Սուրբ Հոգուց է» /Մատթ., Ա, 20/: Եւ /Քրիստոսի/ ծնունդը երկրի վրա՝ կուսական արգանդից էր, եւ հովիվները տեսան, ու մոգերը երկրպագեցին: Իսկ Մկրտությունը դարձյալ վերեւից ծնունդ է կոչվում: Սա՝ ըստ իրողության, /իսկ/ ըստ անվանումների՝ դարձ: /միեւնույն խորհուրդն ունեն/. քանզի Ավետումը Բանն Աստծո հայտնությունն է, որ մարմնացավ, ինչպես ավետարանիչն է ասում. «Եւ Բանը մարմին եղավ» /Հովհ., Ա, 14/: Նույնպես եւ Ծնունդը հայտնություն է կոչվում, ինչպես /Ս. Գրիգոր/ Աստվածաբանն է ասում. «Այսօր Աստուծո Հայտնության տոնն է, քանզի Աստված ծնվելով՝ երկրի վրա երեւաց»: Իսկ Մկրտությունը վկայվեց Հորից. «Դա է Իմ սիրելի Որդին» /Մատթ., Գ, 17/, եւ «Սուրբ Հոգին աղավնակերպ իջավ Նրա վրա» /Մատթ., Գ, 16/ ողջ աշխարհին հայտնելով Նրա Աստվածությունը:

ԵՐԱՆԵԼԻ ԳՐԻԳՈՐ ՍՔԱՆՉԵԼԱԳՈՐԾԻ ԽՈՍՔԸ ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՈՒՆԴԻ ՄԱՍԻՆ

(քաղվածաբար)

Մեծ եւ սքանչելի խորհուրդ ենք տեսնում այսօր: Այս մեծ տոնի օրը՝ Բեթղեհեմը երկնքի նմանվեց, որովհետեւ լուսավոր աստղերի փոխարեն, որպես փառաբանիչներ ընդունեց հրեշտակներին եւ տեսանելի արեգակի փոխարեն ողջունեց արդարության արեգակին:

Ով անհասկանալի եւ սքանչելի շնորհ. Միածինը, որ կար հավիտենականությունից առաջ, անբոտափելի եւ դարգ, անմարմին եւ անհոս, եկավ մսավ աղականացու մարմնից ներս, որպեսզի հայտնվի եւ երեւա: Եւ քանի որ մարդիկ աչքը ականջից ավելի վստահելի են համարում եւ հավատում են այն բանին, ինչ տեսնում են եւ ինչ-որ չեն տեսնում, դրա համար տարակուսում են, այդ պատճառով հանձն առավ Իր երեւումը մարմնով շնորհել, որպեսզի անհավատների թերահավատությունը վերացնի:

Ահավասիկ, կույսը պիտի հղանա եւ ծնի Էմմանուելին, որ բարգմանաբար նշանակում է Աստված մեզ հետ է: Այսուհետեւ Ավետարանը այս դեպքը չի պատմում որպես աղագայում լինելիք, որ հույսով ենք ակնկալում տեսնել, այլ որպես եղած ու կատարված մի իրողություն: Կանխավ այս դեպքը հրեաների կողմից էր խոսվում, որովհետեւ նրանց մոտ իսկ պատահեց. բայց մեր կողմից հավատ ընծայվեց, որովհետեւ վերցրին, ընդունեցին եւ հավատացին: Հրեաների կողմից էր հոչակվում, որ, ահավասիկ, կույսը պիտի հղանա. դեռի մասին խոսքը խաչ հանողների մոտ եղավ, իսկ շահն ու արդյունքը՝ Եկեղեցու մոտ: Հին Ուխտը օրինագրի տախտակները առավ, իսկ եկեղեցին ստացավ պատվական մարգարիտը: Նա ծիրանի զգեստների բուրդը ներկեց, իսկ սա ծիրանի պատմուճանը հագավ: Նրանք ցորենի հատիկ ցանեցին, իսկ հեթանոսները հավատով հասկը հնձեցին: Հրեաները խոտան դառնալով խեղդվեցին փշերի մեջ, իսկ հեթանոսները հարուցան զմայլելի պտուղներով: Նրանք օրենքի ավանդներն են մեկնում, իսկ հեթանոսները կյանքի պտուղն են կթում:

Արդ, Քրիստոս՝ աշխարհի Փրկիչը, Իր ծնունդը ցույց տվեց որպես մի նոր եւ չհնաց դեռի, որպեսզի Իր զորությունը հայտնի լինի եւ ցույց տա, որ նույնիսկ մարդ լինելու համար չի ծնվում մարդու նման, այլ որպես Աստված է մարդ լինում: Քանզի Նա էր, որ սկզբում էր, եւ կույս հողից ստեղծեց Ադամին, եւ Ադամից առանց կնոջ միջնորդության հանեց Եվային՝ կնոջ նմանությամբ: Այնպես էլ այսօր առանց այր մարդու միջնորդության, կույսը ծնեց երկրորդ Ադամին՝ աշխարհի փրկչին: Եւ որովհետեւ կանացի ցեղը պարտական էր այր մարդկանց հատուցում անելու, ինչպես որ Ադամից առաջին կինը առանց կնոջ միջնորդությամբ եղավ, նույնպես կնոջից այր մարդ ծնվեց առանց այր մարդու միջնորդության, որպեսզի Եվայի փոխարեն կատարի հատուցումը, որը պարտական էր Ադամին: Ինչպես որ Ադամից վերցվեց կողը եւ դրանից չնվազեց, նույնպես եւ կույսից մարմին վերցրեց եւ նրա կուսությունը չկողոպտվեց: Կույսը այրի մեջ ծնունդ տվեց, եւ Նրան, ում երկինքը չէր կարող կրել, մսուրը բավարար եղավ բնակության համար:

Ով աղհատություն աղբյուր հարստության եւ կարոտություն աղբյուր գանձերի. աղհատության մեջ երեւալով՝ մեծությամբ է լցնում աղհատներին եւ անբանների մսուրի մեջ բազմելով՝ Իր հրամանով շարժում է տիեզերքը: Խանձարուրով ծոյված՝ խզում է մեղքի կապանքները: Արդ՝ երբ կտեսնես խանձարուրով պատված Մանկանը, մտածումներդ մի սահմանափակիր Նրա մարմնական ծնունդով միայն, այլ բարձրացի՛ր վեր՝ մինչեւ Նրա աստվածավայել փառքի տեսությունը. միտդ բաղ բռչի վեր՝ մինչեւ վերին երկինքը, եւ այնտեղ պիտի տեսնես Նրան վեհագույն բարձունքների մեջ:

Այսուհետեւ եկեք, տարեկան մեծ ցնծությամբ տոնենք այս օրը: Սույն տոնի օրենքը նոր է, որովհետեւ հրաշալի ծնունդը տոնելու պատճառներ կան. այս մեծ տոնի օրը ժամանակավոր կապանքները արձակվեցին, սատանան ամոթաքարշ եղավ, եւ բոլոր դեւերը փախուստի դիմեցին, սպանող մահը կյանքի փոխվեց, դրախտը բացվեց ավազակի առջեւ, անեծքը օրհնության վերածվեց, մեղքերը ընկրկեցին, հրեշտակները մարդկանց հետ հաղորդակից եղան, որովհետեւ Աստված իջավ երկիր, եւ մարդիկ բարձրացան երկինք: Բոլորը միացան, որովհետեւ Աստված հաճեց բոլորը Իր անձի մեջ բովանդակելու: Վերինները հետ միացրեց վարի արարածները. Խաղաղություն եղավ մեզ Քրիստոս, որին Հայր Աստծո հետ փառք, պատիվ եւ երկրպագություն, կենդանարար Սուրբ Հոգով, այժմ եւ միշտ եւ հավիտյան. ամեն:

Վազգեն Վրդ. ՄԻՐՋԱԽԱՆՅԱՆ

ՀՈԳԵՒՈՐ ԿՅԱՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Դասախոսություն՝ կարդացված Մարսելում

/Սկիզբը՝ նախորդ համարում/

Ամենայն Հայոց Գարեգին Ա Հայրապետի եկեղեցական գործունեության կարեւորագույն հասատությունքներից մեկը հանդիսացավ 1995թ. սեպտեմբերին հաստատած Քրիստոնեական դաստիարակության եւ քարոզչության կենտրոնը, որի առաջ դրվեց չորս հիմնական խնդիր.

ա. ստեղծել քրիստոնեական դաստիարակության ուսուցիչների վերապատրաստման լաբորատորիաներ,

բ. հաստատել քրիստոնեական դաստիարակության եւ կրթության համակարգ,

գ. պատրաստել կրոնի դասագրքեր, կիրակնօրյա վարժարանների եւ պետական դպրոցների տասնամյա ուսումնական ծրագրեր,

դ. իրականացնել զանգվածային քարոզչություն՝ հրատարակելով հոգեւոր-կրոնական թերթեր, դավանական, խրատական, տնախնամական գրքույկներ, պատրաստել հեռուստատեսային հաղորդումներ:

Քրիստոնեական քարոզչության այս առաքելության համար Կաթողիկոսարանի կողմից կենտրոնին տրամադրվել են համակարգիչներ, համաբանական գույք, նյութական միջոցներ եւ այլ պարագաներ:

Կենտրոնն անցնող երկու տարիների ընթացքում իրականացրել է իր առջեւ դրված հետեւյալ խնդիրներն ու ծրագրերը.

ա. Քրիստոնեական կրոն դասավանդող ուսուցիչների վերապատրաստման լաբորատորիաներ:

1995-97թթ. Հայաստանի հինգ քաղաքներում՝ Երեւան, Արմավիր, Արարատ, Մասիս եւ Աղարակ, բացվեցին քրիստոնեական կրոն դասավանդող ուսուցիչների լաբորատորիաներ, որոնցում ընդգրկվեցին ավելի քան 500 մանկավարժներ եւ համալսարանավարտներ: Երկամյա ուսումնական տարեշրջանում նրանց ուսուցանվել է Հին եւ Նոր Կտակարաններ, Հայ Եկեղեցու պատմություն, Հայ Եկեղեցու տներ, Քրիստոնեական եւ Ընդհանուր Եկեղեցու պատմություն: Անցնող մայիս-հունիս ամիսներին անցկացվել են հատուկ քննություններ, եւ նրանցից 350-ը սույն թվականի նոյեմբերի 29-ին՝ Քրիստոնեական դաստիարակության օրը, կստանան համապատասխան վկայականներ ու կաբխատեն կիրակնօրյա վարժարաններում եւ պետական դպրոցներում: Նշված լաբորատորիաների ունկնդիրների հոգեւոր գիտելիքները հարստացնելու նպատակով մեկ տարի եւս կշարունակվի Ս. Գրքի խորացյալ ուսուցումը:

Այս՝ 1997-98 ուսումնական տարում, եւս հինգ քաղաքներում՝ Վանաձոր, Աբովյան, Հրազդան, Աշտարակ եւ Եղեգնաձոր, բացվեցին համաբանական լաբորատորիաներ, նրանցում ընդգրկված են 320 մանկավարժներ, որոնք եւ երկամյա դասախոսություններին մասնակցելուց հետո կորակավորվեն որպես կրոնի ուսուցիչներ:

Նշված առարկաները դասախոսում են Մայրավանքի միաբան հայրերը եւ թեմերի պատրաստված հոգեւորականները:

Կենտրոնի տնօրինությունը հոգում է դասախոսական հանձնախմբի վարձատրությունը, վերապատրաստվող ուսուցիչների երթեւեկության ծախսերը, անվճար ապահովում համաբանական գրականությամբ եւ դասախոսությունների նյութերով:

Պատեհ առիթներով լաբորատորիաների անդամների հետ կազմակերպվում են ուխտագնացություններ՝ Հայաստանի պատմական վանքեր եւ սրբավայրեր:

բ. Քրիստոնեական դաստիարակության եւ կրթության համակարգում.

Կենտրոնը համակարգում է Հայաստանի թեմերում գործող կիրակնօրյա վարժարանների գործունեությունը:

Վարժարաններում ուսանում են Ա-Ժ դասարանների սաներ: Նրանց ուսուցանվում է Ս. Գիրք, Հայ Եկեղեցու տոներ, քրիստոնեական բարոյագիտություն, աղոթք, շարական: Վարժարաններում գործում են երգչախմբեր, ազգագրական երգի-պարի խմբակներ: Կիրակնօրյա վարժարանների երգչախմբերը եկեղեցիներում հաճախակի երգում են դպրաց բաժինը: Ազգային-եկեղեցական տոներին կազմակերպվում են գեղեցիկ միջոցառումներ: Ուշագրավ է կենտրոնի մշակույթի բաժնի նախաձեռնությամբ կիրակնօրյա վարժարանների սաների միջոցով սույն թվականի Ս. Ծննդյան եւ Հարության տոների համախառնային տոնախմբությունը, Ս. Էջմիածնի տոնին նվիրված հանդիսություններ շարք: Կիրակնօրյա վարժարաններում ընդգրկված են հազարավոր երեխաներ, որոնք սիրով են տպասում շաբաթվա այդ մեկ օրվան:

Կիրակնօրյա դպրոցներից բացի կրոն է դասավանդվում Երեւանի 25 պետական դպրոցներում, Աբովյանի 2 եւ Նոյեմբերյանի 2 պետական դպրոցներում:

Ուսումնական տարեշրջանի ավարտին, մանուկներին իրենց հոգեւոր մշակույթին ավելի մոտցնելու նպատակով, կազմակերպվում են ուխտագնացություններ՝ Հայաստանի պատմական վանքեր: Շրջանավարտներին տրվում է ավարտական վկայական: Կենտրոնի /մշակույթի բաժնի մանկական ջութակահարների խմբի մասնակցությամբ/ եւ «Մոնիկ» քրիստոնեական մշակութային միության ջանքերով այս տարի սեպտեմբերին Արցախում կազմակերպվել է ցուցահանդես: Սույն միջոցառման շնորհիվ հոգեւոր հաղորդակցություն հաստատեց Ս. Էջմիածնին կից կիրակնօրյա վարժարանների եւ Ստեփանակերտի երաժշտության երեխաների միջեւ:

գ. Կրոնական դասագրքերի եւ ուսումնական ծրագրերի պատրաստում.

Անցնող տարի կենտրոնի կողմից հրատարակվեցին Զ, Է եւ Ը դասարանների եւ վերահրատարակվեցին Ա եւ Թ դասարանների դասագրքերը, եւ այսպիսով, Արարատյան Հայրապետական թեմի կողմից նախկինում հրատարակված կրոնի չորս դասագրքերի՝ Բ, Գ, Դ, Ե եւ «Գանձասար» աստվածաբանական կենտրոնի կողմից պատրաստված Ժ դասարանի դասագրքերի հետ միասին պատրաստ են 10 դասարանների դասագրքերը եւ ուսուցիչների ուսումնական ուղեցույց-ծրագիրը:

Մայր Աթոռի հովանավորությամբ հրատարակվել են «Ի խաւէ ի լոյս» գունազարդ ավետարանական պատկերներով մանկական ալբոմներ: Կենտրոնի կողմից պատրաստվել է հոգեւոր զգեստների եւ սպասքի նկարագրման մանկական գրքույկ:

Հոգեւոր կրթօջախների համար հրատարակվել է «Շարակնի ընտրանի» գիրք, որտեղ հարյուրից ավելի շարականներ եւ մեղադիներ են ամփոփված:

դ. Զանգվածային քարոզչություն.

Քարոզչական նպատակներով կենտրոնի հրատարակչական բաժինը իր ջանքերով հրատարակել է Առաքել Սյունեցու «Ամբողջ չարը տանջանքի ենթակա է», Կարապետ արքեպիսկոպոս Պալատացու «Ծանուցում խահանաներին աղաչխարության խորհրդի մասին», «Մեկնություն ժամակարգության», «Հոգեւոր գրադարան» մատենաշարով՝ Եղիշեի «Ճառ Տիրոջ պայծառակերպության մասին», Զաքարիա Չագեցու եւ Մովսես Քերթողի «Աստվածամոր վերափոխման եւ նրա պատկերի մասին», Ս. Գրիգոր Տաթեւացու «Քարոզ խաչի», «Տոն մեր Ս. բարգմանիչների», «Ցորս Ավետարանների մեկնություն», Պետրոս Քեղիրյանի «Լեզու նախնեաց» գրքերը: Այս շարքում առանձնահատուկ է Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանի «Համաղասումի» արեւելահայերենի վերածելը եւ շարադրությունը:

Վերահրատարակվել են «Նեռածություն Նոր Կտակարանի», «Ինչո՞ւ ենք սիրում Աստծուն» գրքերը:

Հրատարակության են պատրաստվում Արարատ Տեր-Միքայելյանի «Քրիստոնեականը» եւ Նոր Կտակարանի յուրաքանչյուր գրքի վերաբերյալ Ս. Հայրական մեկ մեկնություն:

Արեւելահայերենի են վերածվում միջին եւ ուշ շրջանի եկեղեցական գործիչների քարոզգրքերը: Նշված աշխատանքներն իրականացվում են Ս. Էջմիածնի հոգեւոր ճեմարանի բարձր լաբորատորիաների հետ միասին:

Կենտրոնը ՀՀ հեռուստաընկերության հետ համատեղ պատրաստում եւ եթեր է հեռարձակում հոգեւոր երեք հաղորդաշար՝ «Խորան լուսոյ», «Սիրեցէք զմիմեանս» եւ մանկական «Առաւօտ լուսոյ»: Հեռուստատեսային հոգեւոր հաղորդումներն օգնում են Ս. Էջմիածնի հոգեւոր խորհրդատվոր վայրեր տարածելուն եւ մեր ժողովրդին նախնիների հավատին հաղորդակից դարձնելուն:

«Առաւօտ լուսոյ» մանկական հաղորդաշարը իսկապես բնույթ ունի. ամեն կիրակի առավոտյան մասայ սերունդը տեղեկանում է օրվա տոնի եւ խորհրդի մասին, լսում մանուկների երգեցողությամբ շարական կամ մեղեդի:

Զանգվածային քարոզչության մեծ լիցք ունի «Քրիստոնեայ Հայաստան» երկաբաբաթերթը, որը հիմնադրվեց 1997թ. մարտ ամսին: Այն հավատացյալներին ծանոթացնում է Մայր Եկեղեցում կատարված իրադարձությունների մասին, ներկայացնում այդ շաբաթների եկեղեցական տոները, սրբոց հիշատակությունները, ընթերցողին մատուցում քրիստոնեական մշակույթ եւ արվեստ:

Հայաստանի եւ Արցախի թեմերի հետ քրիստոնեական դաստիարակության ու քարոզչության գործընթացը զարգանում է թեմերի կայացման եւ թեմական գործունեության ծավալմանը զուգընթաց: Անցած տարվա նոյեմբերի 19-ին Վեհափառ Հայրապետի եւ Հայաստանի թեմական առաջնորդների հետ խորհրդակցական ժողովին առաջարկված խնդիրներից մեկն էլ քրիստոնեական դաստիարակության գրասենյակների հաստատումն է եւ նրանց միջոցով տեղերում գործունեության ծավալումը:

Այսօր՝ մեկ տարի անց, դա իրողություն է, եւ այս գործընթացը պետք է ծավալվի հոգեւոր նոր աղասավորների համալրումով եւ քրիստոնյա մտավորականների, որոնք է՝ վերապատրաստված ուսուցիչների հոգեւոր կրթական գործունեությամբ:

Հատկանշական է Եկեղեցու գործունեությունը նաեւ զինվորական ոլորտում. ս. թ. սեպտեմբերից Գարեգին Ա Վեհափառի բարձր կարգադրությամբ հաստատվեց ազգային բանակի խորհրդատուի ծառայությունը, որի միջոցով Ավետարանի խոսքը պետք է տարածվի նաեւ մեր զինվորական համակարգից ներս՝ ամրացնելու հավատը եւ բարոյականի բարձր գիտակցությունը ազգային-եկեղեցական արժեքների նկատմամբ:

Հայ Առաքելական Եկեղեցու գործունեության ոլորտում գործում է նաեւ Երեւանի պետական համալսարանի աստվածաբանական ֆակուլտետը, որի շրջանավարտները նույնպես կրացնեն քրիստոնեական կրոն դասավանդող ուսուցիչների թիվը: Նույն ֆակուլտետի սաների ջանքերով եւ Ս. Էջմիածնի հետեւողական աշխատանքների միջոցով պետական մայր բուհում կազմակերպվել է Քրիստոնյա հանալսարանական ճեմարանի միությունը, որը կարեւոր ազգային-եկեղեցական շարժում է համալսարանական ուսանողության շրջանակներում:

Այսպիսին է կրոնահոգեւոր ընդհանուր վիճակը այսօր, բայց հույսով եւ հավատով լցված ենք, որ մոտ աղագայում Աստծո օգնությամբ եւ մեր նվիրյալ հայրերի հրահանգների ծառայության շնորհիվ Ավետարանի արքազան պատգամները առավել ոգի ծլարձակեն մեր ժողովրդի սրտերում, առավել ոգի բարգավաճի հոգեւոր կյանքը մեր հայրենիքում եւ Արցախում:

Եւ եկեք մենք բոլորս միասնաբար, այս հավատքի ոգիին աղոթենք մեր Մայր Եկեղեցու պայծառության եւ մեր հայրենիքի բարգավաճման ու բարորության համար:

Եւ թող աստվածային սերն ու երջանկությունը լինի Ձեզ բոլորիդ: Ամեն:

21 նոյեմբեր. 1997թ.

ԲԱՐԻ ԵՐԹ ՄԵԾ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆԸ

Նոյեմբերի 29-ին Վեհարանում Քրիստոնեական դաստիարակության օրվան նվիրված հանդիսավոր արարողության ժամանակ ՀՀ գիտության եւ կրթության նախարար Արարատ Պետրոսյանի ողջույնի խոսքը ոգեւորության աղիք է առաջացրել կրոնի դասընթացի շրջանավարտների մեջ: Նախարարը կարեւորեց կրոնի դասավանդումը հանրակրթական դպրոցներում, գնահատեց կատարված աշխատանքը, ինչպես նաեւ խոստացավ հնարավորության սահմաններում սատար կանգնել քրիստոնեություն դասավանդողներին, օժանդակել, որպեսզի Հայ Առաքելական Եկեղեցու հավատքը տեղ գտնի մեր դպրոցներում, հայ մանուկների սրտերում: Այդ գործընթացը կնպաստի նաեւ, որպեսզի օտարածին եւ օտարամուտ գաղափարախոսությունները հող չգտնեն իրենց ընձյուղներն արձակելու համար: Նախարարի խոսքերից հաջալերված ուսուցիչներն իրենց շնորհակալական նամակներն են հղում խմբագրություն, որոնցից մեկին հարկ համարեցինք անդրադառնալ:

Չարի եւ բարու մշանորդ պայքարում բարու եւս մեկ հաղթանակ: Մեր սրբազան հայրերի ծնվարից հավատը պիտի ուսուցանվի Հայաստանի հանրակրթական դպրոցներում, եւ այդ գործը հաջալերվում է նաեւ պատշոնական ատյանների՝ գիտության եւ կրթության նախարարության կողմից: Այս երեւույթը հույս է ներշնչում, որ չարի տարածած խավարը պիտի անհետանա: Գիտենք, որ մեր իրականության մեջ բույն են դրել բազմաթիվ կեղծ գաղափարախոսություններ, կրոնական զանազան հոսանքներ, որոնք ծնվարից հավատը ներկայացնում են ծուռ հայելու մեջ եւ հրանցնում նաեւ դպրոցահասակներին: «Վասն զի ժամանակ պիտի գա, որ ողջամիտ վարդապետությանը պիտի չհամբերեն, հապա հաճելի բաներ լսելու մարմաջով իրենց ցանկություններու համեմատ վարդապետներ պիտի դիզեն իրենց» /Հմմտ., 3, 1-4/: Հաճույք քարոզող անհատապատշական ասյաններ՝ գիտության եւ կրթության նախարարության կողմից: Այս երեւույթը հույս է ներշնչում, որ չարի տարածած խավարը պիտի անհետանա: Գիտենք, որ մեր իրականության մեջ բույն են դրել բազմաթիվ կեղծ գաղափարախոսություններ, կրոնական զանազան հոսանքներ, որոնք ծնվարիս հավատը ներկայացնում են ծուռ հայելու մեջ եւ հրանցնում նաեւ դպրոցահասակներին: «Վասն զի ժամանակ պիտի գա, որ ողջամիտ վարդապետությանը պիտի չհամբերեն, հապա հաճելի բաներ լսելու մարմաջով իրենց ցանկություններու համեմատ վարդապետներ պիտի դիզեն իրենց» /Հմմտ., 3, 1-4/: Հաճույք քարոզող անհատապատշական գաղափարներով խարխլվում է հատկապես միամիտ մանկան հոգեկան ամբարիշտ: Սակայն «Իմ երկնավոր Հոր կամքը չէ, որ այս փոքրիկներից մեկը կորչի» /Մաթ., 18, 14/: եւ այժմ, քանի որ կամոքն Աստծո «առատության տարիներ» են, պիտի սերմանել եւ ամրաբել եւ երեխաների քրիստոնեական դաստիարակության գործը սերնդեսերունդ իրագործել Հայաստանում:

Ուրախալի է, որ Ամենայն Հայոց կաթողիկոս Վեհափառ Տեր Գարեգին Առաջինի բարձր կարգադրությամբ մեզ՝ կրոնի ուսուցիչներիս, շնորհվել է այդ մեծ ծրագրի իրագործման մասնակիցը լինելու արտոնությունը: Մեր երեխաները կարիք ունեն հոգեւոր սննդի, եւ ուսուցիչն է, որ կենաց հացը պիտի հասցնի նորահասակ սերնդին: Որպես բարի սերմնացան՝ աղոթքով, հավատքով եւ Սուրբ Հոգու զորությամբ Աստծու խոսքը պետք է աճեցնենք մեր մանուկների հոգիներում: Եթե կրոնի ուսուցչի մեջ երեւա Հիսուսը, ամենաղժվար երեխան անգամ կարող է վերափոխվել: Չգտնեմ նմանվել լավագույն ուսուցչին եւ մեր անձը վերանորոգելով, մարդագործելով՝ կարողանանք անձնական բարի օրինակ լինել մանուկների համար:

Արմենուհի ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

ՍԱՄԻՐ ՔԱՖԻՖԻ

«Ես ողջունում եմ Ձեզ Երուսաղեմից՝ մեր քրիստոնեական հավատի մայրաքաղաքից»

«Այս դատմությունը կանխագուշակելի չէ, որովհետև այն ուղղակիորեն մեզ համար սահմանված մի բան չէ»:

Սա մի հաղվածք է Նորին Սրբություն Գարեգին Ա-ի խոսքից՝ ասված Նյու Յորքի Քրինսեթոն ակումբում 1990 թվականի մայիսի 18-ին: Այս գաղափարը Վեհափառ Հայրապետի հիշողության մեջ խորապես արմատավորվել է դեռևս 1975 թվականին, երբ կատարվում էր Մեծ Եղեռնի հիշատակության վաքսուներորդ տարելիցը:

30! թվականին Հայաստանում քրիստոնեությունը հռչակվեց պետական կրոն: Վերցնելով խաչը եւ հետեւելով Տեր Հիսուս Քրիստոսին՝ դուք իբրեւ ազգ եւ իբրեւ Եկեղեցի, կամավոր կերպով հետեւեցիք «տառապանքի ճանապարհին»: Այդպիսով՝ մարտիրոսությունը դարձավ ձեր հավատքի ուղենիշը:

Աստծո Եկեղեցին հաճախ սահմանվել է իբրեւ.

1. Համախմբում, ժողով՝ կոչված Աստծո կողմից.

2. Եղբայրակցություն՝ կոչված ընկերակցության եւ բաժնեկցության համար.

3. Պատարագ՝ կոչված երկրպագության եւ աղոթքի համար.

4. Սարկավագություն՝ կոչված ծառայության՝ միմյանց ոտքերը լվանալու համար.

5. Մարտիրոսություն՝ կոչված զոհաբերության, տառապանքի եւ հանուն հավատքի նահատակվելու համար:

Հայ ազգը իր դատության ընթացքին ցուցաբերել է նորկտակարանյան Եկեղեցու բոլոր այս հինգ հատկանիշները, եւ անկասկած, դրա շնորհիվ իր հավատը արժանացել է մարտիրոսության արյան վկայության դատկին... Դրանով հանդերձ դուք դպանել եք մեր հավատքի մաքրությունն ու դարգությունը: Շնորհակալ ենք Ձեզ մեր քրիստոնեական հավատքի դայծառ եւ կենդանի վկայության համար:

Վաղ ժամանակներից սկսյալ՝ արդեն հինգերորդ դարից ի վեր, հայ ուխտավորների քարավանները ժամանել էին Երուսաղեմ: Այս աղոթող ուխտավորներից շատերը հաստատվեցին Պաղեստինում: Այդ օրերի մասին է վկայում այն փաստը, որ այսօր շատ հայեր կրում են այնպիսի անուններ, որոնք տեղանուններ էին Պաղեստինում եւ Հորդանանում: Ս. Հերոնիմոսը 386 թվականի իր նամակներում արդեն հիշատակում է հայ ուխտավորների գալուստը: Այդ ժամանակվանից սկսյալ՝ Երուսաղեմը Ս. Էջմիածնից հետո դարձավ հայերի գլխավոր կիզակետը:

Այսօր ես ողջունում եմ Ձեզ Երուսաղեմից՝ մեր քրիստոնեական հավատքի մայրաքաղաքից: Ես ողջունում եմ Ձեզ արեւելյան քաղաքից բացառապես քրիստոնեական ողջույնով. «Քրիստոս յարեաւ: Նա արդարեւ յարեաւ: Ալէլուիա»:

Ինձ թվում է, թե այսօր իմ տանն եմ եկել: Եւ իրապես ես իմ տանն եմ լինելով Նորին Սրբություն Գարեգին Ա-ի հետ: Քառասուներեք տարի անց Լիբանանի եւ Սիրիայի քրիստոնյա երիտասարդների միությունում ես հանդիպեցի Նորին Սրբության հետ: Եւ վայելեցնապես մենք դարձանք ընկերներ: Անգլիհայկական երկկողմանի հարաբերություններ եւ էկումենիզմի միացյալ ճամփորդությունը մեզ համար առիթ հանդիսացավ Նորին Սրբության առաջնորդությունից սովորելու ընծայման կոչը, արիությունը, հավատարմությունը եւ հոգեւորությունը: Եկեղեցիների միջինասիական խորհրդի նախագահությունում ես՝ իբրեւ դաշտոնակից, բացառիկ հնարավորություն ունեցա դասեր սանալու մեր ընդհանուր հավատքի այս արեւելյան հսկայից եւ նաեւ հայ ժառանգության հարստությունից:

Սիրեցյալներ, իբրեւ դաղեստինցի քրիստոնյաներ, մենք միսիքարվում եւ սփոփվում ենք Ձեր հավատքով, Ձեր նվիրվածությամբ եւ Ձեր գոյատեւմամբ: Փառք Աստծուն բարեբեր փոփոխությունների համար:

Անգլիկան օրացույցի մեջ մենք Ս. Ծննդյան տոներից անմիջապես հետո նշում ենք նաեւ հետեւյալ տոները:

Առաջին. երբ Ս. Ծննդյան հանդեսներից, ուրախության եւ երաժշտությունից հետո մենք հիշում ենք Ս. Ստեփանոսի քարոզումը եւ նահատակությունը: Քրիստոսի հրաշափառ Ծնունդը տոնելուց հետո մենք անմիջապես կատարում ենք առաջին մարտիրոսի կյանքի եւ մահվամբ վկայության հիշատակը, որը մահվան դահին աղոթել է իրեն սպանողների համար: Գալով Հայաստան՝ որեւէ մեկը չի կարող չկնճռոնանալ այստեղ ժամանակին տեղի ունեցած նահատակությունների վրա, եւ իմ այցելությանս ընթացքին ես նույնդես տեսա այս ամենը, ինչը կարող է արդյունք լինել միայն մեծ հավատքի:

Երկրորդ. անմիջապես նահատակության եւ հալածիչների համար աղոթելու դպատկերի վրա կենճռոնանալուց հետո մենք կատարում ենք «Կյանքի» տոնակատարությունը, ինչպես դպատկերվում է Ս. Հովհաննես ավետարանիչը: Սա ցույց է տալիս մեր հավատքի նոպատակը. մարդիկ կարող են դարգանալ կյանք ունենալ եւ կամ էլ կարող են չափազանց կատարյալ եւ բովանդակալից կյանք ունենալ, եւ հասկ է, որ սա է մեր առաքելության նոպատակը: Բեյրութի ամերիկյան համալսարանը հինգադրոդները չէին կարող ավելի հարմար ասվածաբանչային սահմանում գտնել, քան այս տողերը՝ վերցված Ս. Հովհաննեսի Ավետարանից. «Ես եկա, որպեսզի նրանք կարողանան կյանք ունենալ եւ ունենան այն առավելագույնս»:

Եւ երրորդ. Ս. Հովհաննեսի կողմից կյանքը երաշխավորելուց հետո մենք կենճռոնանում ենք իրականության, շարժառիթների եւ տառապանքների վրա, որովհետեւ իրական կյանքում գոյություն ունեն տառապանք, հալածանք եւ նույնիսկ մահ:

Մենք հիշում ենք այն երեխաներին, որոնք սպանվեցին Հերովդեսի հրամանով՝ Բեթղեհեմի կոտորածը: Մենք նույնպես հիշում ենք փախուստը դեպի Եգիպտոս, երբ Սուրբ Մանուկը դառնում է փախստական եւ անտուն է մնում Եգիպտոսում: Երեմիա մարգարեն արդեն իսկ նախագուշակել էր այդ անունը. «Ռաֆելը ողբում էր իր զավակների համար...»: Ս. Ծննդյանը հաջորդող այս իրադարձությունը իմինին կոտրած էր, մեծ ցավի, տանջանքի եւ ողբի ժամանակահատված: Այս դարագային մենք տեսնում ենք մարդու ընդդիմությունը, որը փորձում է հակառակվել Աստծո կամքին... Իբրեւ դաղեստինցիներ, մենք էլ ձեզ նման, եղբայրներ, միսիքարվում ենք այս հավատքով...

Աստծուն փառաբանելը եւ երկրի վրա մարդկանց միջեւ բարի կամքի առաջացումը չի կարող հասանելի լինել առանց որոշակի չարչարանքի եւ տառապանքի... Անմեղ, բոլորովին հանցանք չունեցող երեխաները առաջինը վճարեցին մեզ համար: Խաղաղությունը բանկ գին ունի: Մենք գիտենք, որ ամբողջ աշխարհում մինչեւ այժմ յուրաքանչյուր տարի ընթացքում մեկ միլիոն դոլար է ծախսվում զենքերի արտադրության համար: Ես հարց եմ տալիս, թե որքա՞ն դետք է վճարվի աշխարհի կողմից լիարժեք խաղաղության ձեռք բերման համար: Խաղաղությունը չափազանց բանկ է, այն ավելին արժե, քան դատերազմը, եւ վաղուց արդեն ժամանակն է, որ մենք սկսենք խաղաղության հիմնադրամի հանգանակությունը:

Գոյություն ունի մի հանրահայտ խոսք հավանաբար վերցված արեւելյան իմաստությունից, որ անգամ վաս իրավիճակից միշտ մի լավ բան է դուրս գալիս: Անկասկած, ներկայիս խաղաղության մղումը, թե միջազգային, թե տրջանային մակարդակներում, վկայությունն է այն բարիքի, որը դետք է առաջանար առկա վաս կացությունից: Խնդրում եմ աղոթե՛ք մեզ հետ խաղաղությանը ուզելակող խոչընդոտների վերացման, նաեւ Երուսաղեմը բոլոր մարդկանց, ներառյալ դաղեստինցիների առջեւ բացելու համար:

«Երանի՜ խաղաղարարներին, որովհետեւ նրանք Աստծո որդիներ դիսի կոչվեն» /Մատթ., Ե, 9/:

Երանի՜ խաղաղարարներին... Խաղաղությունը հաստատված է: Այն մի ճանապարհ է, որին դետք է հետեւել, քայլել նրանով, ինչպես Զաքարիան օրհնության մեջ է ասում. «Առաջնորդել մեր ոտքերը խաղաղության ճանապարհով»: Մեր Տիրոջ խաչը կատարյալ օրինակն է խաղաղությանը ծառայելու համար: Նա խաղաղությունը արարեց՝ Իրեն զոհաբերելով խաչի վրա: Խաղաղությանը ծառայելն անհատների եւ ազգերի համար նոր հնազանդվելուց: Այն հռչակված է հրեաների կողմից Ծննդյան երգեցողության ժամանակ. «Փա՞ռք Աստծուն՝ բարձունքներում, եւ երկրի վրա խաղաղությո՞ւն, եւ հաճույքն մարդկանց մեջ»:

Մենք դետք է անենք այս բաց դժվարին բանը. հավատանք, որ սիրո վերքերն ավելի խորն են, քան մարդկանց զենքերինը: Ուսի՛ դեկ միասին, բոլոր սահմաններից այն կողմ անցնելով, տոնենք նոր աշխարհի լուսաբացը, որ խաղաղությունը ամբողջությամբ իշխում է ամեն ինչի վրա:

Գեղարդի վանքում

«Ընչաքաղցության եւ աղքատության խավարի մեջ եկեք բարձրացնենք արդարության ճրագը: Մենակության՝ եւ դատշնաթաղության խավարի մեջ եկեք վառենք հույսի կրակը: Բռնության խավարում եկեք վառենք խաղաղության լույսը»:

«Ես քաղցած էի՝ եւ ինձ տրամիր տվեցիք, ծարավ էի, եւ ինձ ջուր տվեցիք խմելու, օտար էի, եւ ինձ ձեր մեջ առաք, մերկ էի, եւ ինձ հագցրիք, հիվանդ էի, եւ ինձ տեսնելու եկաք, բանտում էի, եւ ինձ մոտ եկաք» /Մատթ., Իե, 35-36/:

«Տերը մեզ դարձնում է խաղաղության գործիքներ: Ուր որ ատելություն կա, եկեք սեր սերմանենք, ուր որ վիրավորանք կա՝ ներողություն, ուր որ անհամերաշխություն կա՝ միություն, ուր որ կասկած կա՝ հավատք, ուր որ հուսահատություն կա՝ հույս, ուր որ խավար կա՝ լույս, ուր որ տխրություն կա՝ ուրախություն» /վերագրվում է Ս. Ֆրանչեսկո Ասիսցուն/:

Այդ իսկ դատճառով, լինենք Հայաստանում թե Պաղեստինում, եկե՛ք մեզ հանձնենք Աստծո ձեռքերին: Թող մեր ձեռքերը դառնան Նրա ձեռքերը՝ աշխատելով օրը գիշեր եւ միշտ հուսալով. «Եղիցին կամք քո որպէս յերկինս եւ յերկրի»: Ամեն:

Անգլերենից թարգմանեց
Հարություն սրկ. Հարությունյանը

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՒ ԲԱՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԳԵՒՈՐԳՅԱՆ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Դեկտեմբերի 8-ին Գեւորգյան ճեմարանում հյուրընկալվեց Երուսաղեմի եւ Մեծավոր առեւելքի Անգլիկան եկեղեցու եպիսկոպոս գերաշնորհ Սամիր Քաֆիֆին:

Ճեմարանի տեսուչ Հայկազուն վարդապետ Նաջարյանը ներկա գտնվող միաբաններին ու ուսանողներին ներկայացրեց ցանկալի հյուրին եւ նշեց, որ նա իրենց ներկայացուցչական աթոռի թվով տասնհինգերորդ եպիսկոպոսն է:

Այնուհետեւ գերաշնորհ Ս. Քաֆիֆին իր ողջույնի եւ օրհնության խոսքն ուղղեց բոլոր ներկաներին: Նա գնահատանքով արժեւորեց Հայ եկեղեցու դերը Ընդհանրական եկեղեցու կյանքում եւ նշեց, որ իր բանախոսության նյութը բաղկացած է երկու մասից՝ արաբ քրիստոնեության եւ Երուսաղեմի մասին:

Նա ասաց, որ դետք չէ կարծել, թե բոլոր արաբները մահմեդական են, որովհետեւ Գործք առաքելոցում՝ Հոգեգալստյան ժամանակ հիշվում են նաեւ արաբները, եւ ըստ ավանդության՝ Մարկոս ավետարանիչն իր քարոզչական գործունեությունը սկսեց Արաբիայում, այնտեղ տասնվեց տարի քարոզելուց հետո է, որ անցավ Եվրոպա: Նա արեւելյան ժողովուրդների կյանքում քրիստոնեության դերը կարեւորեց այն առումով, որ այն զուտ կրոն չէ, այլ արդեւաձեւ է դարձել, եւ երկու ժողովուրդներիս քրիստոնեական հիմքերը հաստատված են սրբերի կյանքի վրա: «Մեր եւ Ձեր հավատքը զուտ աստվածաբանություն չէ, այլ նաեւ սրբաբանություն, որովհետեւ այն հիմնված է սրբակյաց կյանքի վրա, ինչպես Գեղարդի վանքում գտածների»:

Այնուհետեւ Ս. Քաֆիֆի սրբազանը խոսեց քրիստոնեական կյանքում Երուսաղեմի ունեցած դերի մասին եւ այն մեր հավատքի մայրաքաղաք անվանեց: Ըստ նա՝ քրիստոնյաներիս համար նվիրական են երեք քաղաքներ. Բեթղեհեմը՝ որպես մեր հավատքի քարայր եւ սկիզբ, Նազարեթը, որտեղ մեր հավատքը հեզահետ մեծացավ եւ վերջապես Երուսաղեմը, որտեղ Հարությունը տեղի ունեցավ: «Արեւելքում հոգեւոր եւ քաղաքական հարցերը խաչաձեւվում են, եւ դժվար է այս երկուսը միմյանցից զանազանել, եւ եթե մենք կորցնենք Երուսաղեմը, կկորցնենք այն բեմը, որտեղ տեղի է ունեցել Հարությունը:

Հանդիպման ավարտին նա դատասխանեց ներկաներին հետաքրքրող մի շարք հարցերի, ճեմարանի գրադարանին նվիրեց իր հեղինակած գրքերից մեկը եւ ուսանողներին անգլերեն լեզվով հոգեւոր երգ սովորեցնելուց հետո շնորհակալություն հայտնելով հայր Հայկազունին՝ հանդիպումը կազմակերպելու համար՝ հրաժեշտ տվեց բոլորին:

Հայր դոքտ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԿԱՐԱՊԵՏ ԱԲԵՂԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«Լինել Քրիստոսի հետ, ապրել առաքյալներից ժառանգված Հայոց Եկեղեցու գրկում»

Վասն այնորիկ կոչեցար անուն նորա խառնակութիւն /Բաբելոն/, զի անդ խառնեաց Տէր Աստուած զլեզուս ամենայն երկրի /Ծննդ., ԺԱ, 9/:

Այս խոսքերը գտնվում են Աստծո արարչագործության պատմության՝ Ծննդոց գրքում:

Ադամի եւ Եվայի անհնազանդության մեղքը սկիզբ է դնում մարդու անկմանը: Դախտից վտարումով մարդը հեռանում է Աստծուց: Եւ որքան բազմանում են մարդիկ, այնքան ավելի խոտորվում եւ մոլորվում են իրենց ասվածուրաց մտածումների մեջ: Այսպիսի ընթացքն Ասված արգելեց ջրհեղեղով: Փրկության արժանացավ միայն Նոյը՝ իր ընտանիքով: Սակայն ջրհեղեղը չդարձավ վերջնական լուծում մարդկային ցեղի փրկության համար: Մարդիկ ազեցին եւ սերունդներ ունեցան: Եւ երբեք էլ չհրաժարվեցին իրենց մեղսալի ընթացքից, այլ ընդհակառակը՝ միաբանվեցին, բանի որ ունեին մեկ ընդհանուր լեզու եւ իրենց ժողովրդի իրագործման համար որոշեցին կառուցել մի երկնաբարձ աշտարակ, որի գագաթը հասնի երկինք, եւ ամենաբարձրյալի համբավ ձեռք բերեն ողջ աշխարհով մեկ: Սուրբ Գրքը պատմում է, որ Ասված իջավ, որպեսզի տեսնի այդ բաղաքը եւ աշտարակը, որ կառուցում էին մարդկանց որդիները: Տեր ասաց. «Սրանք մեկ ժողովուրդ են, ունեն մեկ լեզու եւ սկսել են այդ գործը անել: Արդ, ոչինչ չի խանգարում նրանց, որ կատարեն այն, ինչ կատարում են...»: Եւ Ասված, խառնելով նրանց լեզուները, ափոեց նրանց ողջ աշխարհով մեկ, եւ մարդիկ դադարեցին կառուցել աշտարակը: Այդ իսկ պատճառով կոչվեց խառնակություն Բաբելոն:

Ասվածային նախախնամության մեջ կատարվող դեպքերը շատ հաճախ դիտվում են անտեղի. երբեմն էլ վնասակար, երբ մեկնաբանվում են մարդկային ոմի գիտության եւ ոչ թե հավատի տեսանկյունից: Շատերն այդ անտեղի դեպքերի շարին հեշտությամբ կարող են դասել ասվածաշնչյան այս պատմությունը, եթե աշխատանքը դիտեն իբրեւ մի տարազ աշխարհություն: Իսկ ոմանք էլ միգուցե փորձեն մեղադրել Աստծուն ասելով, թե մարդիկ աշտարակ եւ բաղաք էին կառուցում, իսկ Ասված իջավ, խառնեց մարդկային լեզուները, դադարեցրեց նրանց գործը: Սակայն արդյո՞ք սա մի տարազ աշտարակաշինություն էր:

Հանախ, սիրելի՛ բարեկամներ, միշտ մտածելու համար շատ անհրաժեշտ է նախ եւ առաջ սովորել ճիշտ նայել, լինեն դեպքեր, պատկերներ եւ թե խոսքեր: Այսպիսի վերլուծական դիտակետից, թերեւս, պետք է նայել այս պատմությանը, որով մեր առջեւ բացվում է մարդ արարածին հատուկ հոգեբանական մի վարագիր:

Երկնքին հասնող աշտարակաշինությամբ մարդը ձգտում էր հրաժարվել ասվածային իշխանությունից եւ ազատությունից: Սակայն ազատությունից զրկած ստեղծագործական այդ բաղը կատարվում էր ոչ թե Աստծո էությանը նմանվելու, Աստծո բարությանը հավասարվելու միտումով, այլ, ինչպես Սուրբ Գրքում է ասվում, «ողջ աշխարհում համբավ ձեռք բերելու» գիտակցությամբ: Այսինքն՝ ինքն իրեն Ասված հռչակելու անկոչ ծարավով:

Իսկ այդ ծարավը երբեք չի հագեցնում բարին գործելով: Այն բավարարվում է միայն իշխելաստեղծության ախտագագաթով:

Ախտային այս զգացումը փորձ է մեղավոր ինքնահասատմամբ: Կյանք առանց Աստծո, որ իրականանում է ոչ թե Աստծո հանդեպ չեզոքության պահպանումով, այլ ինքդ քեզ Աստծուց անկախ, վերջում Ասված հայտարարելու փորձով: Որը բացահայտ ընդոստությունն եւ աղտամբությունն է ընդդեմ Աստծո, բնամությունն Նրա հանդեպ:

Մեղավոր ինքնահասատմամբ ինքնավարությունը մարդկանց մեջ ծնվեց մեր նախածնողներից եւ անկնաելիորեն այսօր է թափանցում է մեր էության եւ ամեն մի արարքի մեջ:

Այս ընթացքը բացահայտ երեւում է մեր երկրագնդում, անընդհատ շարունակվող պատերազմների մեջ: Այն նկատելի է մի եկեղեցու ծոցում /իսկ եկեղեցին ժողովուրդն է/ շահագործական ճանապարհներով ցգեղորեն բազմացող եւ եկեղեցու միավորությունը խախտող աղանդների, կեղծ հավատացյալների միջոցով: Այստեղ, ինքիշխյալոց, արժե նշել, որ ինչպես եկեղեցու մերժման 70 անցած համայնավարական տարիները, որ որակավորվում են իբրեւ անհավատության եւ ընդոստության տարիներ, հովի նման եկան, անցան ու գնացին, այնպես էլ նույն ճակատագիրը կունենան այդ կեղծ ուսմունքները: Որովհետեւ դրանք նույնպես ընդոստություն են Աստծո դեմ: Այս կաղակցությամբ պարզապես մեզանից յուրաքանչյուրին հարկավոր է, որ անկեղծորեն սահմանի ինքն իրեն: Լինել Քրիստոսի հետ, ապրել առաքյալներից ժառանգված Հայոց Եկեղեցու գրկո՞ւմ թե՞ հետեւել սուտ մարգարեներին, որ վերջում հասցնում է հոգեւոր բթացման, հոգեւոր մահվան:

Սիրելի՛ հավատացյալ ընթերք եւ եղբայրներ, այս երկու կողմնորոշումներից բացի, այսօր, ցավով եմ նշում, որ շատ են հանդիպում մարդիկ, որ չեզոք դիրք են բռնում կենդանաբար եւ գործնական հավատի հանդեպ: Մեր շրջապատում հաճախ ենք հանդիպում «իմ խիղճն է իմ Աստվածը» արտահայտությանը: Սակայն այսպիսի մի հարց. արդյո՞ք այդպիսի մարդկանց խիղճը չի դավաճանում, երբ նյութապաշտական փորձությունների օղակը առավել է սեղմվում:

Չէ՞ որ Աստծո հանդեպ չեզոքությամբ, անտարբերությամբ, ոչ գործնական հավատով /իսկ գործնականը եկեղեցու կյանքին մասնակցելն է/ մարդը դառնում է եսակենտրոն, նրա մեջ նվազում է հոգեւորը: Իսկ թե ոչ հոգեւոր եւ անասված մարդն ինչերի է ընդունակ, մեկնաբանության կարիք չունի: Սեփական խիղճն ասվածացնելը ողորմելի մի ինքնաարդարացում է, նույնպես ընդոստություն է Աստծո դեմ եւ երեսթեքություն Աստծուց:

Այսպիսով, սիրելիներ, հեռացումն Աստծուց շարունակվում է մինչեւ մեր օրերը:

Մարդը տարբեր ժամանակներում տարբեր կերպ է հասկացել իր պատկանելությունը անկումային աշխարհին: Սրանով պայմանավորվել է նրա կյանքի խորությունը, իսկ սրա բացակայությամբ դուրս է մղվել նյութապաշտական աշխարհ: Պարզապես յուրաքանչյուր հայ հրիստոնյայի համար անհրաժեշտ է իսկությամբ իմանալ իր հավատքի էությունը: Այդրել Քրիստոսի հետ եւ Աստծո հետ, չի նշանակում ամբողջությամբ ժխել աշխարհը, այնպես, ինչպես հրիստոնեական հավատը երբեք չի բաժանում մարմինը հոգուց, եւ պետք էլ չէ բաժանել:

Մեր հավատքի նոպասակն է աշխարհում եւ յուրաքանչյուրի սրտում հաստատել հոգեւորի սկիզբը, հոգեւորի իշխանությունը: Ինչպես մեր ֆիզիկական նեղպայությամբ լցնում ենք Աստծո տաճարը, նույնպես եւ լցնենք այն հոգեւոր միությամբ:

Այս դեպքում Տերը կիջնի ոչ թե խառնելու մեր միությունը, այլեւ օրհնելու եւ զորացնելու հավիտյանս: Ամեն:

Դեկտեմբեր. 1997 թ.

ԲԱՐՍԵՂ ՎԱՐԴԱՊԵՏ ՍԱՀԿԵՏԻՈՐՅԻ,
ԺԴ ԴԱՐ

ԵՐՋԱՆԿՈՒԹՅԱՆ ԳԱՂՏՆԻՔԸ

> «ՎԱՐԴԱՊԵՏԱՑ ԵԿԵՂԵՑՈՅ ՊԻՏՈՅ Է ՎԱՄՆ ԵՐԻՑՆ ԳԻՏԵԼՈՅ.
> ՎԱՄՆ ԱՆՑԵԼՈՅՆ ՊԱՏՄԵԼ,
> ՎԱՄՆ ՆԵՐԿԱՅԻՆ ԽՕՍԻԼ,
> ՎԱՄՆ ԱՊԱԳԱՅԻՆ ԻՄՆԱԼ ԵՒ ՉԳՈՒՇԱՑՈՒՑԱՆԵԼ»:
>
> *Թովմա Մեծոփեցի*

Ինչ տեսակի վիշտ էլ ունենանք, պետք է համբերենք եւ ոչ թե տրտնենք: Մի՛ տագնապեք ժամանակի ընթացքում կատարվող վշտերից, որովհետեւ հնարավոր չէ գտնել մեկին, որ հոգսերից ազատ լինի: Ինչպես որ նավավարը դժվարություններով կտրում է ծովը, նույնպես անկարելի է, որ աշխարհի մեջ եղող մարդը առանց նեղության լինի. եթե ոչ այսօր, սակայն կգա ժամանակը, երբ մարդը կտրտի: Մեկը կնոջից է վշտանում, մյուսը՝ զավակներից, մեկ ուրիշը՝ բարեկամից, մեկ այլը՝ թշնամուց: Մի խոսրով, անհոգ մարդ չկա, աղքատ լինի թե հարուստ, նույնիսկ թագավորը, որովհետեւ նա եւս չի կարող ամեն ինչ իր ուզած ձեւով կատարել: Մտածի՛ր, թե որքան տխրություն կղաստեղվվի, երբ ուզենա մի բան անել եւ չկարողանա՝ կամ վախի, կամ վատ կարծիքների պատճառով: Արդարեւ, հնարավոր չէ խոսրով բացատրել նրանց տրտմությունը, թեեւ գործը ինքնին ամեն ինչ ասում է:

Որքան մեծահարուստներ կան, որոնք մահ են ղղնում, որովհետեւ փափկությունն իր հետ զանազան տեսակի ցավեր ու վշտեր է բերում, եւ ըստ բժիշկների՝ տրտմությունը չափազանց վնասում է սատմոխին:

Ամեն ոք կարծում է, թե իր վշտերը ընկերոջ ունեցածից ավելին են: Ինչպես որ, երբ մեկի մի որեւէ անդամ ցավելիս, այլը կամ ատամը, կարծում է, թե դրա ցավը սասկագույնն է, նույնպես, ով որ նեղության մեջ է լինում, մտածում է, թե իրենը ամենից ավելի անտանելին է: Այսպես, այն, որ զավակ չունի, կարծում է, թե դրանից ավելի մեծ դժբախտություն չկա. նա, որ շատ զավակներ ունի եւ ադխտ է, դրա համար է նեղվում, իսկ նա, որ միայն մեկ զավակ ունի, դա դիտարկում է երբեմն որոնս գեղագույն չարիք, որովհետեւ ճնուոս լինելով՝ շատ չի լսում խրատները:

Նա, որ գեղեցիկ կին ունի, դրա համար է մտահոգվում, որովհետեւ միշտ կասկածի մեջ է լինում, իսկ նա, որ տգեղ կին ունի, դրա համար է ցավում, որովհետեւ ժողովուրդը խոսում է, թե դրանից ավելի տգեղը չկա, եւ իսկապես որ մարդիկ միշտ չարամիտ են: Ռամիկի համար կյանքը դյուրին է թվում, իսկ գինվորի համար՝ չափազանց դժվար: Նա, որ իշխան է, իր ասիիճանը դժվարագույնն է նկատում, որովհետեւ ուրիշների համար է հոգում, իսկ նա, որ հոյակապ է, իշխանությանը ենթակա լինելուց ավելի դժվար բան չի տեսնում: Կին ունեցողը դրանից ավելի ծանր հոգս չի երեւակայում, իսկ նա, որ չունի, իրեն դժբախտ է համարում: Վաճառականը երանի է տալիս մշակին որովհետեւ նրան նկատում է որոնս անհոգ, իսկ մշակը՝ վաճառականին, որովհետեւ հարուստ է: Իրավ որ՝ մարդ արարածը դժգոհ եւ տրտնջացող է, եւ երբ մեկը մարդկային ցեղը նախատել է ուզում, այն թշվառական կենդանի է կոչում:

Արդ, չտրտնվի երկրավոր նեղության համար, որովհետեւ այստեղի տառապանքը փոխությունի պատճառ է, մինչ անդենական նեղությունը տանջանք է: Մեր այս կյանքը պատերազմի շրջան է, եւ ոչ ոք պատերազմի մեջ հանգիստ եւ դյուրություն չի փնտրում: Թող ոչ ոք ինչի կամ կնոջ համար չտահոգվի, այլ միայն այն մասին, թե մեր մեջ գտնվող թշնամիներին, ախտերին եւ դեւերին ինչպես կարող է հաղթել:

Տառապելը չարիք չէ, այլ մեղանչելն է իրավ նեղություն ե՛ւ այստեղ, ե՛ւ անդենականում: Եթե չես հավատում, հարցրու նրանց, որոնք չարիքները, չե՞ն զարհուրում եւ դողում: Ուզո՞ւմ ես անդենականի մեջ հանգիստ լինել, այստեղ տանջվի՛ր Քրիստոսի համար, որովհետեւ բարի են վիշտն ու նեղությունը, իսկ չար՝ հանգիստն ու փափկությունը, եւ սա հայտնի է բազմաթիվ օրինակներից: Տես, ինչպե՞ս էր Ադամը դրախտում եւ ինչպե՞ս եղավ նրանից հետո. կամ ինչպե՞ս էր Կայենը սկզբում եւ եղբոր սպանությունից հետո. արդարեւ, կարծես հոգին իմին իր մեջ չի հանդարտվում, այլ խիստ հեղեղից էլ ավելի նման հեշտությունից դեպի է:

Տես նաեւ Դավիթը, երբ նեղության մեջ էր, թշնամիներին խնայում էր, իսկ փափկության մեջ բարեկամներին իսկ չխնայեց: Եթե կիսն ես, երբ նեղության մեջ էր, ուրեմ հագավ, իսկ երբ հեշտության մասնեց ինքն իրեն, տուժեց, որովհետեւ խրախնանքը հոգատացնում է մարդս:

Այս պատճառով ասված է. «Զգույշ եղիր անձիդ հանդեպ, երբ ուտես եւ խմես, զուցե մոռանաս Տեր Աստվածդ» /Բ. Օրինաց, Զ, 6-12/: Երբ հրեաները նեղության մեջ էին, Աստծուն էին աղաղակում, իսկ երբ նեղությունից ազատվեցին, ամենին էլ մեռան: Այս ամենը մեզ մոտ էլ ենք տեսնում. երբ հեշտանում ենք, հոյարտանում ենք եւ երբ իշխանության գլուխ ենք հասնում, բոլորի հանդեպ թշնամի եւ բարկացկոտ ենք դառնում, իսկ երբ մեզնից առնվում է իշխանությունը, հեզ ենք լինում, որովհետեւ ադխտները ինքնաբերաբար խելի են գալիս:

Այս ասացի, որպեսզի հեշտությունների ուրախությունը չփնտրենք, այլ այն, որ ըստ Աստծո է, ինչպես Պողոսն է գրում, թե միշտ «ուրախ եղեք Տիրոջով» /Փիլիպ., Գ, 1/: Հնարավոր չէ, որ մեկը միաժամանակ ուրախանա հանծայն աշխարհի եւ Աստծո, որովհետեւ աշխարհի ուրախությունը տեղի է ունենում հարստությամբ եւ փափկությամբ, իսկ ըստ Աստծո՝ լինում է անարգանքով, աղքատությամբ, պահիով եւ աղոթքով:

Արդ, սիրելի երկրորդը, թեեւ մեզանից հեռու է, եւ ատելի առաջինը, թեեւ ունենք մեր ծեռքում: Իսկ թե ասածս բարի է, լավ լսեք, կա՞ ավելի խայտառակ վիճակ, քան երբ մարդը բռայլությամբ փափկանում է. այդպիսիները անտեղի ծաղրանքներ ու տգեղ խոսքեր են ասում, շատ բաներ ասելով կամ իրենց մեջ պահելով՝ ապականություն են առաջացնում, եւ ինչ որ ամենից ավելի գարեւի է, իրենց ծածուկ զգայարանները միշտ լեզվի ծայրին ունեն:

Մեր նախնիք միշտ նեղությամբ էին ապրում ու չէին դժգոհում, որովհետեւ Աստծուն էին ծառայում: Երբեմ չէին ասում. «Ի՞նչ է տա, Աստծուն ենք ծառայում, եւ Նա մեզ չի օգնում», ընդհակառակը՝ ավելի էին գոտեմարտվում Աստծու փրո մեջ: Նրանք նախ հավատում էին, թե Աստծու խոսքերը սուտ չեն. արդարեւ, ոչ մեկը, երբ ուզում է մեկին խաբել, նրան ասառպահ է տալիս եւ ապա՝ ուրախություն, այլ նախ զվարթացուցիչ բաներ է առաջ մղում, ապա՝ տառապալից բաժինը: Երկրորդ՝ նեղության մեջ ավելի ժուժկալ եւ տոկուն էին դառնում, ինչպես առաքյալն է ասում. «Նեղությունը համբերության պատճառ է դառնում» /Հռոմ., Ե, 3/: Ինչպես որ տառապանքը կրկնակի բարիք է պարգեւում, նախ ժուժկալ ենք լինում եւ ապա վարձատրվում, նույնպես փափկությունը կրկնակի չարիքի ծնունդ է տալիս, նախ թույլ ենք լինում եւ ապա հավիտենական տանջանքի առաջնորդվում:

Չկա ավելի անպիտան բան, քան այն մարդը, որ միայն վայելքի մեջ է ապրում, որովհետեւ ինչպես ասում է. «Այն մարդը, որ փորձություն չի կրել, ընտիր չէ» /Հակ., Ա, 12/, անընտիր է ու անպետք ոչ միայն առաքինությունների, այլեւ ամեն բանի մեջ: Ասացե՛ք ինձ, ո՞ր ձին է ավելի հարգ. գերն ու անվա՞ղը, թե՞ կրթվածը, ո՞ր նավն է նախընտրելի. ծովի վրա արագ սուրացո՞ղը, թե՞ դանդաղաշարժը, ո՞ր ջուրն է հաճելի. հոսո՞ղը, թե՞ լճացածը, ո՞ր երկաթն է օգտակար. գործածվա՞ծը, որ արծաթի նման փայլում է, թե չգործածվածը, որ ժանգից տգեղացած է: Այսպես էլ հեշտությամբ ապրող հոգիներն են ժանգոտված: Իսկ ինչպե՞ս կարող է մեկը ժանգը հոգուց մաքրել.- տառապանքի հեսանով: Ասված մարդը գործունյա ստեղծեց, եւ աշխատելը բնությունից է, մինչ անգործ մնալը բնության հակառակ է: Սա հայտնի է նրանից, որ ամեն անգամ դատարկությունն է, որ վնասում է. եթե աչքը միշտ չգործի, կամ բերանը, կամ որովայնը եւ կամ որեւէ մեկ անդամ, ամենին էլ անգործածությունից կվնասվեն, սակայն մարմինը այնքան չի վնասվում, որքան հոգին:

Արդ, ինչպես որ չաշխատելը չար է, նույնպես է նաեւ պատշաճ կերպով չգործելը. որովհետեւ ինչպես որ երբ մեկը բնավ չուտի, ատամները կվնասվեն, նույնը կպատահի, երբ մեկը անպետք բաներ խիզ կամ փայտ ուտի: Սրա այս կերպ հոգին եւ մարմինը վնասվում են, երբ չեն բանում եւ կամ անշնորհ կերպով են գործում: Ուստի, փախչենք երկուսից էլ՝ աշխատանքի խափանումից եւ չար գործից, եւ միշտ բարիք գործենք, ոչ միայն մենք, այլեւ ուրիշներին եւս հորդորելով, որ նույնը անեն: Ամեն ոք իր կնոջը, եթե ունի, բարեկամին կամ դրացուն թող սասի եւ խրատի:

Արդ, եթե նա, որ հարստություն ունի եւ չի բաժանում, պիտի տանջվի, ապա որքան նա, որ կարող է խրատել եւ չի խրատում, որովհետեւ առաջին պարագայում մարմնավոր սնունդն է խնդրո առարկան, իսկ երկրորդում հոգեւորը, առաջինը ժամանակավոր մահից է փրկվում, իսկ երկրորդը՝ հավիտենականից:

ԴՈՒՌԸ ԿԹԱԿԻ ՁՄԵՌ ՊԱՊԻՆ

Ներս կմտնի նա, ուրախ կժոյտա.

«Շնորհավոր fn Նոր Տարին»...

Փոխրերը չեն, որ երգում են այս երգը: Եւ միայն փոխրերը չեն, որոնց գիտակցության կամ, թերեւս, ենթագիտակցության մեջ Ձմեռ պապը /կամ Կաղանդ պապը/ ամրակայված է որպես Ամանորի ամենացանկալի եւ անակնկալ հայտնվող հյուրը: Բայց, թերեւս, փոխրերն էլ, մեծերին հավասար, կարծում են, թե այդ առասածեռն պապիկի կերպարը հորինված է. բարի հեքիաթասացն է հորինել: Մինչդեռ...

Ձմեռ պապ, Դեդ Մորոզ, Սանթա Քլոզ, Պապա Նոյել, Սինթըր Գլաաս եւ վերջապես՝ Սանտա Կլաուս,–նույն ինքը Սանտֆոուս Նիքոլաուսն է /հայինահունչ/ **Սուրբ Նիկողայոս Մեքենչելագործ** /Հրաշագործ/ հայրապետը, որը դասվել է համաքրիստոնեական սրբերի շարքը եւ ընդգրկվել եկեղեցական տոնացույցում: Հույն եւ Լատին Եկեղեցիները նրան նվիրված տոնը նշում են դեկտեմբերի 6-ին, իսկ Հայ Առաքելական Եկեղեցին՝ Ս. Խաչի 10-դ կիրակիին հաջորդող շաբաթ օրը /այս տարի՝ նոյեմբերի 22-ին/:

Նիկողայոս Մեքենչելագործ հայրապետն այն սրբերից է, որի պատմական անձ լինելը մի տասակ ստվերված է նրան վերագրվող հրաշագործությունների ներքո այնպես, որ գրեթե դարձել է առասպելականացված կերպար:

Նա ծնվել է Փոքր Ասիայի Լիկիա նահանգում 280 թվին: Մեծահարուս, բարեպաշտ եւ բարեգործ հոր զավակ էր, մայրը Նիկողայոս երեց անվանվող եղիսկոպոսի քույրն էր: Տղան ծնողներից զրկվել է շատ վաղ տարիքում եւ հանձնվել մորեղբոր խնամքին: Մանկուց կրթվելով Ավետարանի պատգամներով աստել է բարեկրոն քրիստոնյայի կյանքով՝ հաճախել եկեղեցի, մասնակցել ծեսերին: Սակայն իր ամբողջ կյանքի ընթացքում նա առավել հավատարմորեն հետեւել է ավետարանական այս պատգամին. «Եթէ կամենում ես կատարեալ լինել, գնա, վաճառի՛ քո ունեցուածքը ու տո՛ր աղքատներին» /Մատթ., 19, 21/:

Եւ Նիկողայոս Մեքենչելագործ հայրապետը հրաշագործ էր իր առաջադեռնությամբ: Նա իր հարստությունից անակնկալ նվերներ, ընծաներ էր բաժանում կարիքավորներին:

Պատմվում է, որ Զմյուռնիայի մի մեծահարուս աղքատացել էր եւ չէր կարողանում ամուսնացնել հարսնության տարիքի հասած իր երեք աղջիկներին, բանի որ տեղական սովորության համաձայն՝ պետք է դրամօժիտ ունենար: Ս. Նիկողայոս հայրապետն իմանում է այդ մասին եւ գիշերը ծածուկ, ոսկիներով լի տոպրակ է նետում նրա պատուհանից ներս. ըստ որում առաջին աղջիկն ամուսնանում է: Մյուս երկու աղջիկներին ամուսնացնելու համար էլ նա նույն կերպ օգնում է այդ մարդուն, եւ միայն երրորդ անգամ է, որ հայրը բանվելով բացահայտում է, թե ով է այդ անծանոթ բարերարը:

Ս. Նիկողայոսի կյանքի գրեթե բոլոր իրադարձություններն ուղեկցվել են հրաբերներով: Իմը եպիսկոպոս է ձեռնադրվել բավականին երիտասարդ տարիքում՝ հրաշատես մի երազով: Հետագայում զանազան մեծագործություններ է կատարել իր հրաշախոս աղոթքներով. կենդանացրել է փոքրիկ ժամանակ մահացած մի նավաստու, առողջացրել-ապաքինել է մի ազնվական ճանապարհորդի երեք տղա զավակներին, որոնք ավազակ իջեւանատիրոջ զոհն էին դարձել:

Ս. Նիկողայոս հայրապետը մեծ եռանդով է նվիրվել Աստծո ծառայությանը: Իր բովանդակ կյանքը դարձնելով Ավետարանի քարոզություն՝ նա Աստծու խոսքը տարածել է նաեւ ամսոի ընթացքում, որին արժանացել էր Դիոկղեսիանոսի հալածանքների ժամանակ: Մեծ Կոստանդինոսի՝ խղճի ազատության հռչակումից հետո, վերահաստատելով իր հայրապետական պատգամները, Նիկողայոս Մեքենչելագործը 325 թվին մասնակցել է Նիկիայի տիեզերական ժողովին: Մեկ տարի անց կնքել է իր մահկանացուն:

Նրա անունով բազմաթիվ եկեղեցիներ են կառուցվել տարբեր երկրներում, իսկ գերեզմանը դարեր շարունակ եղել է նվիրական ուխտատեղի:

Ս. Նիկողայոսը համարվում է համայն Ռուսիայի պաշտպան սրբերից մեկը: Իսկ Արեւմուտքում նրա ժողովրդականությունը մեծացել է հատկապես 1087 թվին սրբի նշխարները Իտալիայի Պարի քաղաք տեղափոխելիս, ու եւս նրա անվամբ փառահեղ տաճար է կառուցված: Նշխարների տեղափոխմանը մի գեղեցիկ ավանդություն է հյուսված, ըստ որի՝ նավաստիներից երկուսը փորձում են նշխարներից մեկական մաս գողանալ, բայց հենց այդ պահին մեծ փոթորիկ է պատահում: Նավաստիները գիտակցում են իրենց սխալը եւ իրենց գողացածն իսկույն տեղը դնում. փոթորիկն անմիջապես դադարում է, ու նավը փրկվում է կործանումից:

Ճշմարիտ հավատքը, աստվածային սերն ու քրիստոնեական բոլոր առաքինությունները մարմնավորող այս սուրբն է, որ Ամանորի գիշերը պիտի թակի բոլորիս դռները՝ ստի դռները, ու իբրեւ ամանորյա անակնկալ ընծա՝ մատուցի իր բարությունն ու ջերմությունը՝ փոխադարձելու պատգամով:

... Դուռը կթակի՞ Ձմեռ պապին:

Աննա ԱԼՈՅԱՆ

ՁԱՏԻԿ ԵՒ ՓՈՔՐ ՁԱՏԻԿ

Ձատիկ անունը վերջնական ընդունված բացատրություն չունի, ավանդաբար կապվում է գաղել՝ **«անջատել»** բառին, իբրեւ հավատացյալներին հեթանոսներից զատել, ջոկել:

Ընդհանրապես, հիմք ընդունելով Հայոց հնագույն օրացույցի եւ գլխավոր տոնի մասին մեր պատկերացումը, կարելի է «զատիկ» անվան համար առաջարկել այսպիսի բացատրություն:

Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ զատիկը գրվել է Հրեից Պասխայի դիմաց: Իսկ Հրեից Պասխան, փաստորեն, նրանց տարեմուտն էր. տոնվում էր տարվա առաջին ամսում (Ելից, ԺԲ): Այսինքն, Հրեից տարեմուտի դիմաց դրվել է հայերեն Ձատիկ անունը, որ հիմք է տալիս մտածելու, թե Հայոց մոտ էլ տարեմուտը կամ տարեմուտին կապված մի տոն, հնում կոչվել է Ձատիկ: Ըստ այսմ՝ զատիկ նշանակում է «իրարից զատել հին եւ նոր տարիները» կամ «իրարից զատել Մութ եւ Լույս ափխարհները /նկատի առնելով պատշաճող էակի՝ Հայր Աստծու՝ Մութ Ափխարհից Լույս Ափխարհ ելնելը/: Ձատիկի այսպիսի մեկնությունը կարելի է դարձնում բացատրել նաեւ, թե ինչու է **Հայտնության** /Աստվածահայտնության/ տոնը Հայոց որոշ հաստվածների կողմից կոչվում **Փոքր Ձատիկ**: Իրոք, եթե Ձատիկը նախապես տարեմուտի իմաստ է ունեցել, ուրեմն եւ եղել է գարունամառ սահմանին եւ եղել է տարեկան տոներից առաջինը (իբրեւ տարեմուտ): Քրիստոնեության մուտքով տարվա տոներից առաջինն է դառնում Հայտնությունը (այդ մասին նշված է առաքելական կանոններում ու նաեւ Անանիա Շիրակացու Հայտնության ճառում) որով, փաստորեն, Հայտնությունը դառնում է տարեմուտ: Իսկ տարեմուտ լինել, նշանակում է զատիկ, որով եւ Հայտնությունն էլ դառնում է Ձատիկ: Միեւնույն ժամանակ հին Ձատիկը /տարեմուտ/ կապվում է Հարության տոնին, դառնում դրա անունը, եւ այսպիսով, սպացվում է երկու Ձատիկ: Բնականաբար, դրանք իրարից զատելու-զանազանելու համար դրանցից մեկին տրվում է վերադիր անուն: Քանի որ Հարության տոնը ե՛ւ իր ժամանակով, ե՛ւ իր կրած խորհուրդներով շատ ավելի մոտ ու հարազատ էր հին Ձատիկին, ապա Ձատիկ անունը պահպանվում է հենց Հարության տոնի համար, իսկ Հայտնությունը կոչվում է Փոքր Ձատիկ:

Գրիգոր Բրուսյանի «Օրացույց հայոց» գրքից /Ս. Էջմիածին, 19..

ԱՄԱՆՈՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Նոր տարվա հինավուրց տոնը, որ հայերն անվանել են ԱՄԱՆՈՐ /հին հայերեն **ամ** տարի եւ **նոր**՝ բառերից/ կամ ՆԱՎԱՍԱՐԴ /հնդհրանական **նավա**՝ նոր եւ **սարդ**՝ տարի բառերից/, ծեւավորվել է վաղնջական ժամանակներում եւ հազարամյակների ընթացքում անցել զարգացման մի քանի փուլեր: Հնագույն շրջանում եղել է մեռնող եւ հարություն առնող արեւ-աստվածության՝ Արայի տոնը, որը կապված լինելով բության զարթոնքի եւ հողագործական աշխատանքների սկսվելու հետ տոնվում էր գարնանային գիշերահավասարի օրը՝ մարտի 21-ին: Հնում դա համապատասխանում էր բուն հայոց տոմարի առաջին ամսվա՝ Նավասարդի առաջին՝ Արեգ օրվան:

Հին Հայաստանը զարգացած երկրագործության երկիր էր: Նրա բնակիչները, որ վայրի ցորենի ամենաառաջին մշակողներից ու տարածողներից էին, տիրապետում էին նաեւ տոմարագիտական լուրջ գիտելիքների:

Հայոց լեռնաշխարհում վաղուց ի վեր գարնանային գիշերահավասարի օրը՝ փաստացի գարնան առաջին օրը, երբ ցերեկը վերջապես հաղթում էր գիշերին, լույսը՝ խավարին եւ բարին՝ չարին, մեր նախնիները հողագործական աշխատանքները սկսելու նախօրյակին տնում էին բության զարթոնքի հինավուրց տոնը:

Հազարամյակներ շարունակ սիրված եւ ժողովրդականություն վայելած այս տոնը, բնականաբար, չէր կարող մոռացվել նաեւ Հայաստանում քրիստոնեության մուտքից հետո: Ամանորի ծեսերի որոշ մասներառյալ նաեւ ծիսական երգերը շարունակում էին ուսեստեղենը, փոխանցվել են որոշ քրիստոնեական տոների՝ հիմնականում Ծննդյան տոնին եւ Բարեկենդանին՝ գոյատեւելով ընդհուպ մեր օրերը:

Արտակ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԺԱՄԱՆՑ ԺԱՄԱՆՑ ԺԱՄԱՆՑ ԺԱՄԱՆՑ ԺԱՄԱՆՑ ԺԱՄԱՆՑ ԺԱՄԱՆՑ ԺԱՄԱՆՑ

❄❄❄❄❄❄❄❄❄❄ ԲԱՌԱՇՂԹԱ ❄❄❄❄❄❄❄❄❄❄

1. Հայկական թագավորական անուն: 2. Եկեղեցական կարգ, օրենք: 3. Հայ գրող, նովելի վարպետ: 4. Կենդանի, որը «փրկեց Հռոմը»: 5. Միջնադարյան մատենադարան: 6. Երկրամաս: 7. Հայոց կաթողիկոս: 8. Երաժշտական կատարում: 9. Գրական ստեղծագործող: 10. Ավետարանիչ: 11. Նվագարան: 12. Ժամանակ: 13. Նեֆերտիթի արձանի հեղինակը: 14. Հին հունական նշանավոր քաղաք-պետություն: 15. Եկեղեցի Վայոց ձորում, որն օծվեց այս տարի: 16. Տրոյայի մյուս անունը: 17. Ի՞նչ ենք դիմավորում այս օրերին: 18. Հայոց մայրաքաղաք: 19. Հրեական ամսանուն (համապատասխանում է ապրիլին): 20. Լեռ Արեւմտյան Հայաստանում, որը հայտնի է մեծագիր քանդակներով հնագույն դամբարան-արքավայրով: 21. Բեմարվեստի հիմնական տեսակ: 22. Պատմական գավառ Արագածի արեւելակողմում: 23. Եկեղեցական շենքի կարեւոր մաս: 24. Խեցեղենի ջերմամշակում: 25. Միջնադարյան գրավոր մշակույթի հիմնական մասի ընդհանրական անվանումը: 26. Վրաստանում քրիստոնեությունը տարածած սուրբ կույս: 27. Առաջին կինը: 28. Առաջին մարդը:





Քառաշղթան ճիշտ լրացնելով, երրորդ ընդգծված տողում կկարդաք...:

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԲԱՌԱՇՂԹԱՅԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

1. Աշխեն: 2. Նազարեթ: 3. Թադեոս: 4. Սանդուխտ: 5. Տրդատ: 6. Տիգրիս: 7. Սաղմոս: 8. Սինա: 9. Ագաթանգեղոս: 10. Սարկավագ: 11. Գայանե: 12. Երուսաղեմ: 13. Մասնաշուփ: 14. Փիլոն: 15. Նափորս: 16. Տաթեւացի: 17. Իրայել: 18. Լուսավորիչ: 19. Շաբաթ: 20. Ցորեն: 21. Նինվե: 22. Եդեմ: 23. Մատթեոս: 24. Սիամանթո: 25. Ողական: 26. Նոպատ: 27. Տարոն: 28. Նարեկ: 29. Կիլիկիա: 30. Արամ: 31. Մարմաշեն: 32. Նոսրգիր:

ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝ Ս. Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության եւ քարոզչության կենտրոն
Գլխավոր խմբագիր՝ Կարեն Մաթեւոսյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝ քաղաք Վաղարշապատ, Ս. Գայանե եկեղեցի, Քրիստոնեական դաստիարակության եւ քարոզչության կենտրոն
Հեռախոս՝ (8+259) 56780, **Երեւանում՝** 563902
Տպագրվում է «Սարգիս Խաչենց» հրատարակչության տպարանում, Երեւան, Հանրապետության հրապարակ, Հայաստանի Ազգային պատկերասրահ, հեռախոս՝ 582703
Ստորագրված է տպագրության 27. 12. 97
Տպաքանակը՝ 1500 Գինը՝ 50 դրամ: